# Դպրոցական Կրթության Հասանելիությունը Հայաստանում

Հետազոտական ուսումնասիրություն

**Թրփանճեան Հասարակական Հետազոտությունների Կենտրոն**

Հայաստանի Ամերիկյան Համալսարան

Բաց Հասարակության Ինստիտուտ – Հայաստանի Հանրապետություն

2012

Երևան

## Համառոտ բնութագիր

Այս զեկույցում ներկայացված ուսումնասիրությունը համատեղում է առաջնային տվյալների հավաքագրման չորս մեթոդներ՝ (1) դպրոցների դիտարկումներ, (2) հարցում դպրոցների աշակերտների հետ, (3) հարցազրույցներ դպրոցի տնօրենների, պետական մարմինների և փորձագետների հետ, ինչպես նաև (4) ֆոկուս-խումբ քննարկումներ դպրոցների ուսուցիչների և աշակերտների ծնողների հետ: Հետազոտման արդյունքներին աջակցելու նպատակով օգտագործվել են նաև երկրորդական տվյալներ (վիճակագրական տվյալներ, նախկինում կատարված հարցումներ, օրենսդրական փաստաթղթեր, միջազգային կազմակերպությունների հաշվետվություններ): Առաջնային տվյալների հավաքագրման ժամանակահատված՝ օգոստոս – հոկտեմբեր 2012:

Օրենսդրական մակարդակումՀՀ դպրոցական կրթությունը գնահատվում է որպես բավական զարգացած, սակայն այդ օրենսդրության իրականացմանառումով բացեր կան: Որպես դպրոցների տնօրենների քաղաքական պատկանելիության արդյունք հիմնական խնդիր է հանդիսանումդպրոցների քաղաքականացված լինելը, որը պետք է դիտարկվի օրենսդրության կատարելագործման միջոցով: Տվյալ դպրոցում աշակերտների թվի հիման վրա ֆինանսավորման ներկայիս համակարգը խթանում է որոշ դպրոցների լավ աշխատանքը, սակայն խնդիրներ է ստեղծում փոքր դպրոցների համար, որոնք պայքարում են իրենց գործառնությունների մինիմալ մակարդակը պահպանելու համար: Դպրոցների այն կարիքները, որոնք հնարավոր չէ հոգալ պետական բյուջեի օգնությամբ հաճախ ընկնում են ծնողների ուսերի վրա:

Ընդհանուր առմամբ դպրոցները հասանելի են բնակչությանը. դրանց մեծ մասին կարելի է հասնել քայլելու միջոցով:Այնուամենայնիվ դպրոցների հասանելիության հետ կապված նաև մի շարք խնդիրներ կան:

Հետազոտության ընթացքում հնարավոր չէր այցելել երկու գյուղ քանի որ դեպի գյուղեր տանող ճանապարհները անանցանելի էին:

Դիտարկված դպրոցներից մեկ հինգերորդի դպրոց տանող հիմնական ճանապարհները գտնվում են շատ վատ վիճակում, հարցված աշակերտների մեկ չորրորդը նշել են, որ երբեմն հնարավոր չէ հասնել դպրոց ճանապարհային վատ պայմանների պատճառով:

Մեծ տարբերություններ կան դպրոցների շենքային ընդհանուր պայմանների միջև՝ նոր վերանորոգվածներից մինչև ծայրահեղ վատ վիճակում գտնվող դպրոցներ: Դպրոցներում մարզադահլիճների պայմանները առանձնանում են որպես առավել խնդրահարույց և բարելավման կարիք ունեցող համեմատած այլ սենյակների հետ,

ինչպիսիք են՝ գրադարանները, լաբորատորիաները, աշխատանքային սենյակները, ճաշարանները:

Երևանի դպրոցների համակարգչային սենյակների պայմանները զգալիորեն ավելի լավն են մարզերի համեմատ. գյուղերի դպրոցները գտնվում են հատկապես անբարենպաստ պայմաններում: Աշակերտների մեծամասնությունը (89%) կցանկանար օգտագործել համակարգչային սենյակը ավելի հաճախ: Համակարգչային սենյակներում սարքավորումների բացակայությունը խանգարում է որպեսզի աշակերտները դասավանդվող նյութն առավելամբողջական կերպով յուրացնեն: Դասագրքերի վերաբերյալ տիրում է տարածված դժգոհություն թե՛ աշակերտների, թե՛ ծնողների և թե՛ ուսուցիչների շրջանում:

Ընդհանուր առմամբ աշակերտները գոհ են ուսուցիչների և դպրոցներում օժանդակող աշխատակազմի աշխատանքից: Վիրավորանքները և ֆիզիկական բռնությունը հազվադեպ երևույթներ են դպրոցներում: Սակայն որոշ ուսուցիչներ կողմ են աշակերտին ապտակելը որպես դաստիարակչական միջոց կիրառելուն. կա կարծիք որ դա որոշ աշակերտներին հանգստացնելու միակ ճանապարհն է: Ուսուցիչների պատշաճ վերապատրաստման հնարավորության բացակայությունը խոչընդոտում է ուսուցման նոր մեթոդների իրականացմանը:

Աղքատությունը խոչընդոտում է աշակերտի առաջադիմությանը: Տնային ավելի լավ պայմանների և որոշ ռեսուրսների առկայության դեպքում, ինչպիսին է՝ սնունդը, աշակերտները ունեն ավելի բարձր գնահատականներ: Շրջաններում՝ հատկապես գյուղերում աշխատող ուսուցիչները ավելի քաջատեղյակ են թե ինչպիսի դժվարությունների առջև են կանգնում աշակերտները դպրոցում: Նման խնդիրները հաճախ լուծվում են համայնքային մակարդակիվրա, և ընդհանուր կարծիքկա, որ համայնքները նպաստում են խնդրի լուծմանը: Ուսուցիչների սոցիալապես անապահով վիճակը իրենց կարգավիճակի և աշակերտների կողմից հարգանքի առկայության խոչընդոտ է հանդիսանում, ինչպես նաև ստեղծում է կաշառակերության ռիսկեր:

Աշակերտների մեկ երրորդը կարծում է, որ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին ուսուցիչները ավելի վատ են վերաբերվում մյուսների համեմատ: Կրոնական փոքրամասնություններինդասընկերներըվերաբերվումեն ամենավատը աշակերտների այլ խմբերի համեմատ:

## Բովանդակություն

Համառոտ բնութագիր ........ 2

Աղյուսակների ցանկ ........ 6

Պատկերների ցանկ ........ 6

1. Նախաբան ........ 8

1.1. Դպրոցական կրթության համակարգի խոշոր փոփոխությունների համառոտ բնութագիր ........ 9

1.2. Նախկինում կատարած հարցումներ ........ 10

2. Մեթոդաբանություն ........ 12

3.Կրթության հասանելիությունը. իրավական ասպեկտ ........ 15

4. Կրթության հասանելիությունը. ֆինանսական ասպեկտ ........ 19

5.2 Դպրոցներիի շենքերը և ընդհանուր պայմանները ........ 23

5.3 Դպրոցներում ուսումնաօժանդակ սենյակների հասանելիությունը ........ 25

6. Կրթությանհասանելիությունը.նյութատեխնիկական ասպեկտ ........ 28

6.1. Համակարգչային սենյակ ........ 28

6.2. Այլ լաբորատորիաներ և ուսումնական սարքավորումներ ........ 30

6.3. Դասագրքեր ........ 31

7. Կրթության հասանելիությունը. կադրային ասպեկտ ........ 33

7.1 Անձնակազմի ընդհանուր հասանելիությունը և որակը ........ 33

7.2. Նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում ........ 38

8.1. Դպրոցահասակ երեխաների շրջանում առկա աղքատության ընդհանուր ........ 41

գնահատում ........ 41

8.2. Աղքատության ազդեցությունը դպրոցական առաջադիմության ........ 42

վրա ........ 42

8.3. Տեղային և ոչ ֆորմալ լուծումներ ........ 44

8.4. Աղքատությունն ուսուցիչների շրջանում ........ 45

9. Կրթությունը սահմանափակող դիրքորոշային գործոններ. կանխակալ վերաբերմունք ........ 46

10. Ավագ դպրոցներ ........ 50

Եզրակացություններևառաջարկություններ ........ 54

Գրականության ցանկ......................................................................................................................57
Հավելված 1: Դիտարկմանքարտ................................................................................................59
Հավելված 2: Աշակերտների հարցում /հարցաթերթ/ ...................................................................62
Հավելված 3: Խորացվածհարցազրույցներիուղեցույցներ ............................................................71
Հավելված 4: ֆոկուսխմբերումանցկացվողքննարկումներիուղեցույց........................................76
Հավելված 5: Դիտարկման հարցերի արդյունքները/միջին արժեքը/..........................................80

## Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1 Վերջին 5 տարիների ընթացքում միջնակարգ կրթության որակը … CB 2010 և 2011, % ..... 10
Աղյուսակ 2 Ֆոկուս-գրուպքննարկումներիկառուցվածքը ..... 14
Աղյուսակ 3 [Եթեվճարումեքդպրոցիասնելուհամար] ապահնչքա՞ն TCPA OSF Survey ..... 22
Աղյուսակ 4 Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է ձեր դպրոցի ընդհանուր ֆիզիկական վիճակը (կառույց, պատեր, դասարաններ, լույս, ջեռուցում և այլն ) TCPA OSF Survey ..... 24
Աղյուսակ 5 Դպրոցներում այլ սենյակների առկայությունը TCPA OSF Survey ..... 26
Աղյուսակ 6 Ինչո՞ւ չեք օգտագործում համակարգչային սենյակում գտնվող համակարգիչները այնքան որքան կցանկանայիք TCPA OSF Survey ..... 29
Աղյուսակ 7 Ուսուցիչների քանակը ՀՀ-ում ..... 34
Աղյուսակ 8 ՀՀ ուսուցիչներն ըստ սեռի և մայրաքաղաք/մարզերի ..... 34
Աղյուսակ 9 ՀՀ ուսուցիչների կրթությունը ..... 34
Աղյուսակ 10 ՀՀ ուսուցիչների կրթությունը ըստ մայրաքաղաք/մարզերի ..... 35
Աղյուսակ 11 Քանիուսուցիչներենդասավանդումմիքանիառարկաներ ..... 35
Աղյուսակ 12 Խնդրում եմ նշեք թե որքան եք բավարարված. ..... 36
Աղյուսակ 13 Ուսուցիչներիկողմիցկիրառվողկարգապահականմիջոցներ: ..... 37
Աղյուսակ 14 Վարչական անձնակազմի ..... 38
Աղյուսակ 15 Վարչական անձնակազմի կրթությունը: ..... 38
Աղյուսակ 16 Ինչպեն են վերաբերվում ուսուցիչները հետևյալ խմբերին մյուսների համեմատ: TCPA OSF միջին արժեք ..... 47
Աղյուսակ 17 Ինչպես են աշակերտները վերաբերվում հետևյալ խմբերին մյուսների համեմատ: TCPA OSF Survey, % ..... 48

## Պատկերների ցանկ

Պատկեր 1 Վերջին 5 տարիների ընթացքում միջնակարգ կրթության որակը … CB 2010 և 2011, % ..... 10
Պատկեր 2 Ինչքանո՞վէկարևորնշվածխնդիրներիցյուրաքանչյուրըդպրոցում, որըհաճախումէՁերավագերեխան/դուք: Սոցիալականհամախմբվածությանհարցում 2011թ., % ..... 11
Պատկեր 3 Ընդհանուրառմամբինչքա՞նեքվստահումդպրոցներին: Սոցիալականհամախմբվածությանհարցում 2011թ., % ..... 12
Պատկեր4Ի՞նչը կցանկանայիք փոխել ձեր դպրոցում? TCPA OSF Survey, multiple response, (N of answers, % of cases) ..... 26

Պատկեր 5 Որքա՞նհաճախեքօգտագործումձերդպրոցիհամակարգչայինսենյակըTCPA OSF Survey, % ........ 29
Պատկեր 6 Ձեր ուսուցիչները պատրաստակամ են բացատրել դասը ևս մեկանգամ եթե աշակերտները այն չեն հասկացել: ........ 36
Պատկեր 7 Եղե՞լ է, որ բացակայեք դպրոցից, քանի որ պետք է օգնեք ձեր ընտանիքին: ........ 42
Պատկեր 8 Ունեք ստորև նշվածների բավական քանակություն/որակ որպեսզի լավ սովորեք TCPA OSF Survey, % ........ 42
Պատկեր 9 Ինչպես են ուսուցիչները վերաբերվում հետևյալ խմբերին մյուսների համեմատ: TCPA OSF Survey, % ........ 46
Պատկեր 10 Ինչպես են աշակերտները վերաբերվում հետևյալ խմբերին մյուսների համեմատ: ........ 48

## 1. Նախաբան

Կրթությունը առողջ և զարգացած հասարակության հիմքն է, ինչպես նաև քաղաքացիական մշակույթի և ժողովրդավարական քաղաքականության գործընթացներում մասնակցությունը խթանող կարևոր գործոն: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարության կողմից ՀՀ կրթության ոլորտը հանդիսանում է երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահմանման և վերարտադրման նախադրյալներից մեկը (ՀՀ Կառավարություն, 2011թ.):

Ներկայումս ՀՀ-ն ավարտում է իր անցումը խորհրդայինժամանակաշրջանի 10 - ամյա կրթական համակարգից դեպի 12 - ամյա երեք փուլային կրթական համակարգը՝ կազմված տարրական, միջին և ավագ դպրոցներից: Ըստ 2012թ. դրության 1441 հանրակրթական դպրոցներ են գործում ՀՀ-ում: Դպրոցների ընդհանուր աշակերտների թիվը կազմում է 386.5 հազար (տվյալները հայցվել են ՀՀ կառավարությունից, 2012 թ. հունիսին):

Չնայած բոլորի համար հավասարապես մատչելի և որակյալ կրթություն ապահովելու նպատակով կրթական համակարգում տեղի ունեցած վերջին բարեփոխումներին, դպրոցական կրթության ընդհանուր որակը խնդրահարույց է: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի համաձայն (UNICEF, 2012)դպրոցներիդիմորդների մոտավորապես 25 տոկոսը չեն հասնում ավագ դպրոց, իսկ հաշմանդամ երեխաներիմեծամասնության համար հիմնական կրթության հասանելիությունը սահմանափակ է: Մարդկային զարգացման վիճակագրական ինդեքսի համաձայն 2006 - 2009թթ. ՀՀ կրթական ոլորտին տրամադրված ծախսված գումարը կազմել է ՀՆԱ-ի 4.7% (ՄԱԶԾ, 2011):

Տնտեսական համագործակցության և զարգացման երկրների (OECD), կենտրոնական և արևելյան Եվրոպայի, ինչպես նաև ԱՊՀ երկրների համեմատ ուսումնական ծախսերիհարաբերությունըՀՀ ՀՆԱ-ի նկատմամբշարունակում է մնալ զգալիորեն ցածր(ՀՀ Կառավարություն, 2011 թ.):

2008 թ-ի տնտեսական ճգնաժամը իր ազդեցությունը թողեց դպրոցական կրթության որակի վրա, ստեղծելով լրացուցիչ խոչընդոտներ սոցիալապես ծանր պայմաններում գտնվող մարդկանց համար (Թադեւոսյան, 2011 թ.): Չնայածորևէ խոշոր ուսումնասիրություններ դպրոցից դուրս մնացած աշակերտներիվերաբերյալվերջերս չեն կատարվել, դասերից ազատվածների և բացակա աշակերտներին վերաբերող տվյալները հուսահատեցնող են և ցույց են տալիս, որ երկու ոլորտներում էլ աճման միտումներկան (Hua, 2008 թ.): Մնում է պարզել, թե արդյոք այդ միտումները փոխվել են կամ գոնե նվազել:

Հայաստանի Հազարամյակի զարգացման նպատակները 2005-2009թթ.զեկույցում նշվում է, որ երկրի հանրակրթության ոլորտում առկա են զգալի թերություններ: Աշակերտները դպրոց հաճախելու փոխարեն ստիպված են փնտրել մասնավոր ուսուցիչների, ընդունելության չափանիշներին համապատասխանելու և կրթական հաջորդ փուլին անցնելու նպատակով (ՀՀ Կառավարություն և ՄԱԿ-ի Հայաստանյան աշխատակազմ, 2010):

### 1.1. Դպրոցական կրթության համակարգի խոշոր փոփոխությունների համառոտ բնութագիր

ՀՀ դպրոցական կրթության համակարգում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնք ինչ - որ չափով վնաս հասցրեցին կրթական առօրյա գործառնություններին: Այդ փոփոխությունների հետևանքները մինչ այժմ զգալի են: Կարելի է նշել բարեփոխումների երեք հիմնական ոլորտ՝դպրոցական ուսումնառության տարիների երկարաձգում, գնահատման համակարգի փոփոխություն և առանձին ավագ դպրոցների ստեղծում[1]:

Բարեփոխումների մի մաս կազմեցդպրոցական ուսումնառության տարիների երկարաձգումը: Հին համակարգը ենթադրում էր դպրոցական ուսումնառության 10 տարի: 2001թ-ին այն փոխվեց դառնալով 11 տարի, և 2006թ-ին այն դարձավ 12 տարի: (ՀՀ Ազգային ժողով, 1999 թ.):

Ներկայիս Ազգային Համընդհանուր Կրթության Ուսումնական ծրագիրը տասներկուամյա հիմնական ծրագիր է, որը բաղկացած է պարտադիր նախնական (1-ից 4 դասարաններ), պարտադիր ցածր միջնակարգ (5-ից 9 դասարաններ), և բարձր միջնակարգ (10-ից 12 դասարաններ) կրթական փուլերից: Մասնագիտական և տեխնիկական-մասնագիտական դպրոցները հանդիսանում են ավագ դպրոցների այլընտրանք (UNESCO, 2011).

Մեկ այլ խոշոր փոփոխությունը դպրոցական կրթության ոլորտում5-ից 10 բալանոց գնահատման համակարգի անցումն է, որն ուժի մեջ մտավ 2006թ-ից, և որի նպատակն է բարելավել աշակերտների գնահատման արդյունքների ճշգրտությունն ու իսկությունը (ՀՀ Կառավարություն և ՄԱԿ-ի Հայաստանյան թիմ, 2010):

Ամենավերջին փոփոխությունը դպրոցական կրթական համակարգում ավագ դպրոցների ստեղծումն է որպես առանձին դպրոցներ, որոնք համախմբում են տարբեր դպրոցների աշակերտներին: Որոշումը կայացվել է 2008 թ-ինսակայն ուժի

[1]Ի հավելում տեղի են ունեցել տարբեր փոփոխություններ դասագրքերում և ուսումնական ծրագրերում: Դասագրքերի հարցը քննարկվում է այս զեկույցի նյութական և տեխնիկական հասանելիության բաժնում:

մեջ է մտել 2010 թ.սեպտեմբերին: Սա միանգամայն նոր փորձառություն է հայ հասարակության համար, որը ենթադրում է որ երեխան հիմնականում հաճախում է միևնույն դպրոց առաջինիցմինչև վերջին դասարան:

## 1.2. Նախկինում կատարած հարցումներ

Հետազոտական ռեսուրսների Կովկասյան կենտրոնները իրականացնում են Կովկասյան բարոմետր(Caucasus Barometer)ամենամյա ներկայացուցչականհարցումներ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում, որոնք լայնորեն ներառում են ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական և քաղաքականկարծիքներին վերաբերող հարցեր: 2010 և 2011 թթ. կատարված հարցումները ներառում են հարց դպրոցական կրթության որակի ընկալումների վերաբերյալ:Հարցվածների մի մեծ և աճող խումբ կարծում է, որ Հայաստանի դպրոցական կրթության որակը վատթարացել է հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում (Caucasus Research Resource Centers, 2010, 2011) (տե՛ս Պատկեր 1):

Պատկեր 1 Վերջին 5 տարիների ընթացքում միջնակարգ կրթության որակը … CB 2010 և 2011, %




Վիճակագրորեն նշանակելի տարբերություններ կան Երևանում և այլ քաղաքներում և գյուղերում հարցվողների միջև կրթության որակի ընկալման վերաբերյալ[2]: Առավել քննադատաբար են տրամադրված Երևան քաղաքի բնակիչները, նրանց են հաջորդում այլ քաղաքների բնակիչները, իսկ գյուղերում ցուցաբերել են նվազագույն բացասական վերաբերմունք (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1 Վերջին 5 տարիների ընթացքում միջնակարգ կրթության որակը … CB 2010 և 2011, %

[2] One-way ANOVA for CB 2011: $F(2,2017) = 25.555$, $p < 0.001$

| | 2010 | | | 2011 | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Երևան | Քաղաք | Գյուղ | Երևան | Քաղաք | Գյուղ |
| Վատթարացել է | 51 | 43 | 36 | 56 | 51 | 40 |
| Մնացել է նույնը | 29 | 25 | 31 | 22 | 18 | 24 |
| Լավացել է | 20 | 32 | 33 | 22 | 31 | 36 |

Հայ հասարակության սոցիալական համախմբվածության մակարդակի վերաբերյալ մեկ այլ ազգային ներկայացուցչական հարցում (Caucasus Research Resource Centers - Armenia, 2011)ներառում է դպրոցական կրթության վերաբերյալմի շարք հարցեր: Հարցման համաձայն բնակչության 17%-ը իրենց «երբեք» չեն կարող թույլ տալ գնել դպրոցական պարագաներ և գրքեր իրենց ընտանիքի բոլոր երեխաների համար, 10%-ը հազվադեպ են կարողանում իրենց թույլ տալ գնել այդ պարագաները: Հարցվողներին հուզում է կրթության ցածր որակը, դպրոցների վատ նյութական և շենքային պայմանները, սովորողների շրջանում առկասիրված և հայտնի լինելու սոցիալական ճնշումը (օրինակ՝իրենց ցույց տալու անհրաժեշտությունը, ժամանակակից հեռախոս կամ հագուստ կրելը և այլն), ինչպես նաև խտրական վերաբերմունքը ուսուցիչների կողմից: Բռնությանը, թմրադեղերին և երեխաների մեջ էթնիկ անհանդուրժողականությանը վերաբերող հարցերըերեխաների շրջանում գրեթե մտահոգիչ չեն (տե՛ս **Error! Reference source not found.**):

Պատկեր 2 Ինչքանո՞վէկարևորնշվածխնդիրներիցյուրաքանչյուրըդպրոցում, որըհաճախումէՁերավագերեխան/դուք: Սոցիալականհամախմբվածությանհարցում 2011թ., %




Հարցվածների 65%-ը դպրոցների նկատմամբ ունի բավական բարձր վստահության մակարդակ(տե՛սՊատկեր 3): Չնայած հարցվողներիմեծամասնության վստահության բարձր մակարդակի(72.8%) նրանք պատրաստակամություն չեն արտահայտում մասնակցելու իրենց դպրոցի տարբեր խնդիրների լուծմանը: Նրանք, ովքեր պատրաստակամ են, նշել են դպրոցի շենքի վերանորոգում (6.2%), դպրոցում միջոցառումների կազմակերպում (5.6%), դպրոցի բյուջե (5.6%), և առարկայական/ուսուցողական ծրագրեր: Նրանք, ովքեր հայտնել են իրենց մասնակցելու պատրաստակամությունը նշել են՝ դպրոցի շենքի վերանորոգում (6.2%), դպրոցական միջոցառումների կազմակերպում (5.6%), դպրոցային բյուջե (5.6%), և առարկաներ/ծրագրեր (3%):

Պատկեր 3 Ընդհանուրառմամբինչքա՞նեքվստահումդպրոցներին: Սոցիալականհամախմբվածությանհարցում 2011թ., %



## 2. Մեթոդաբանություն

Հետազոտությունը ներառում է առաջնային տվյալների հավաքագրման չորս մեթոդներ՝(1) դպրոցների դիտարկումներ, (2) աշակերտների հարցում, (3) խորը հարցազրույցներ դպրոցների տնօրենների, կառավարության ներկայացուցիչների և փորձագետների հետ, և (4) ֆոկուս-խումբ քննարկումներ ուսուցիչների և ծնողների հետ:Տվյալների հավաքագրումը տեղի է ունեցել 2012թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում:Հետազոտման արդյունքներին աջակցելու նպատակով օգտագործվել են նաև երկրորդական տվյալներ (վիճակագրական տվյալներ, նախկինում կատարած հարցումներ, օրենսդրական փաստաթղթեր, միջազգային կազմակերպությունների հաշվետվություններ):Այս հետազոտությունը ներկայացուցչական չէ:Այն կրում է ճանաչողական բնույթ, որի նպատակն է կարևորել Հայաստանում դպրոցական կրթության հասանելիության խնդրահարույց կողմերը:

*Դպրոցների ընտրանք*

ՀՀ դպրոցների ամբողջական ցանկը ներառելով՝ 1441 գրառում ձեռք է բերվել ՀՀ կրթության և գիտության նախարարությունից: Այնուհետև այն կրճատվել էր սահմանափակելով հետազոտությունը Երևան քաղաքում և չորս մարզերում(Շիրակ, Լոռի, Տավուշ և Սյունիք)[3]ստանալով799 դպրոցների ընտրանք:OSF–ի ընտրանքի ռազմավարության հիման վրա ընդհանուր առմամբ 30 դպրոց էր ընտրվել– 6 դպրոց Երևան քաղաքից, և 6-ական դպրոցներ յուրաքանչյուր ընտրված մարզից: Յուրաքանչյուր մարզում 2 քաղաքային և 4 գյուղական դպրոցներ են ընտրվել. յուրաքանչյուր գյուղական դպրոց ընտրվել էր ըստ համապատասխանկատեգորիայի՝ «մինչև 30 աշակերտ», «31-ից - 60 աշակերտ», «61-ից – 100 աշակերտ» և «101-ից ավել աշակերտ»:

Առնվազն երեք ավագ դպրոցներ են ընտրվել, մեկը՝ Երևանում, մեկը՝ մարզային քաղաքում, մեկը՝ գյուղում: Համապատասխան կատեգորիայի դպրոցները ընտրվել են պատահական թվերի գեներատորի միջոցով (օրինակ 31-ից – 60 աշակերտ ունեցող Տավուշ մարզի գյուղական դպրոց): 30 դպրոցների ընտրանքը տվյալների հավաքագրման ընթացքում ենթարկվել էր փոփոխության, քանի որ յոթ դպրոցների տնօրեններ աջակցել հետազոտությանը՝ կանխարգելելով դիտորդների մուտքը դպրոցի տարածք: Գյուղերում նախնական ընտրանքի համաձայն ընտրված 5 դպրոցներ փոփոխվել են՝ դպրոցի ղեկավարությանը հետ կապ հաստատելու

---

[3]Այսհինգտարածքայինվարչականմիավորները հանդիսանում են հետազոտությաննախընտրածթիրախOSF –Հայաստանի կողմից

անհնարինության պատճառով (2 դեպք), տնօրենի անձնական խնդրի պատճառով (1 դեպք) և դժվարանցանելի ճանապարհային պայմանների պատճառով (2 դեպք):

*Դիտարկումներ*

ԹՀՀԿ անձնակազմն այցելել է 30 դպրոցներ.դիտորդներն օգտագործել են դիտարկումների քարտեր (տե՛ս հավելված1) դպրոցային պայմանների տարբեր կողմեր գնահատելու և դպրոցի անձնակազմի հիմնական տվյալները հավաքագրմաննպատակով: Որոշ դեպքերում տրամադրվել են գրավոր մեկնաբանություններ քանակական տվյալների հավելմամբ:

*Աշակերտների հարցում*

450 անանուն

Ընդհանուր 450 անանուն ինքնուրույնաբար լրացվող հարցաթերթիկներ են բաժանվել աշակերտներին իրենց հաճախած դպրոցներում, ինչպես նաև բնակավայրերի փողոցներում և ընտրանքի դպրոցների շրջակայքում: Տարիքային սահմանափակումն է՝ նվազագույնը 12 տարեկան[4]:Հարցաթերթիկները լրացվել են աշակերտների կողմից հետազոտական թիմի ներկայացուցչի ներկայությամբ, ովքեր նախապես պատրաստված էին աշակերտներին պարզաբանումներ տալու եթե վերջիններս դժվարանային հասկանալ հարցաթերթիկի որևէ հարց:

*Խորացված հարցազրույցներ*

Ընդհանուր29խորացված հարցազրույցներ են կատարվելդպրոցների տնօրենների հետ (17), կառավարության տարբեր ներկայացուցիչների հետ, ինչպիսիք են ԱԺ պատգամավոր, քաղաքապետարանի կրթության վարչության պետ, գյուղապետ (5) և կրթական ոլորտի փորձագետների հետ(7):Հարցազրույցների ուղեցույցը (տես Հավելված 3) պարունակում է ընդհանուր հարցեր, ինչպես նաև համապատասխան նպատակային խմբին ուղղված հարցեր: Հարցազրույցները ձայնագրվել են այնուհետև սղագրվել:

*Ֆոկուս-խումբ քննարկումներ*

Ընդամենը 10 ֆոկուս-խումբ քննարկում է անցկացվել ուսուցիչների (5) և աշակերտների ծնողների (5) հետ – Երևանում, ընտրված մարզերի քաղաքներում և գյուղերում:Ֆոկուս-խումբ քննարկումների ուղեցույցները (տե՛ս հավելված4)

[4] Կային 12 տարեկանից ցածր 20 հարցվող (10 և 11). այս երեխաները սովորում են իրենց ավագ ընկերների հետ, ում հետ և անց էր կացվել հարցումը:

պարունակումէն ընդհանուր հարցեր, ինչպես նաև համապատասխան խմբին վերաբերող հատուկ հարցեր: Բոլոր քննարկումները վարել է միևնույն մոդերատորը (ԹՀՀԿ աշխատակազմի անդամ) նշումներ կատարող օգնականի մասնակցությամբ: Քննարկումները ձայնագրվել են, որից հետո սղագրվել:

Աղյուսակ 2 Ֆոկուս-գրուպքննարկումներիկառուցվածքըւմ ներկայացված է ֆոկուս-խումբ քննարկումների կառուցվածքը:

Աղյուսակ 2 Ֆոկուս-գրուպքննարկումներիկառուցվածքը

| *ՖԳ#* | *Ամսաթիվ* | *Մասնակիցներ* | *Վայր* | *Մասնակիցների քանակ* |
|---|---|---|---|---|
| 1. | 18.07.2012 | Ծնողներ | Երևան | 8 |
| 2. | 21.07.2012 | Ուսուցիչներ | Երևան | 7 |
| 3. | 16.08.2012 | Ավագ դպրոցի ծնողներ | Երևան | 7 |
| 4. | 21.08.2012 | Ավագ դպրոցի ուսուցիչներ | Երևան | 10 |
| 5. | 07.09.2012 | Ուսուցիչներ | Շիրակ, քաղաք | 6 |
| 6. | 20.09.2012 | Ծնողներ | Շիրակ, գյուղ | 7 |
| 7. | 27.09.2012 | Ուսուցիչներ | Լոռի, քաղաք | 7 |
| 8. | 28.09.2012 | Ծնողներ | Լոռի, գյուղ | 6 |
| 9. | 29.09.2012 | Ուսուցիչներ | Տավուշ, քաղաք | 8 |
| 10. | 05.10.2012 | Ծնողներ | Սյունիք, քաղաք | 9 |

## 3.Կրթության հասանելիությունը. իրավական ասպեկտ

ՀՀ Կրթության ոլորտը կարգավորող փաստաթղթերը ներառում են՝ ՀՀ Սահմանադրությունը (1995), ՀՀ Կրթության մասին օրենքը (1999), ՀՀ Հանրակրթության մասին օրենքը (2009), ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ օրենքներ և իրավաբանական փաստաթղթեր: ՀՀ Սահմանադրության մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները գլխի 39 հոդվածում նշվում է. յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, և միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է (*Constitution of the Republic of Armenia*, 1995):

Այս զեկույցում ներկայացված դպրոցական կրթության հասանելիության իրավական դաշտի վերլուծությունը գլխավորապես հիմնված է փորձագիտական կարծիքների, ինչպեսնաևհետազոտության ընթացքում հարցված կրթության ոլորտի մասնագետների փորձի վրա: Խոսելով կրթության համակարգում բացթողումների ինչպես նաև դրանք բարելավելու հնարավոր ուղիների մասին, փորձագետները դրական են գնահատում գոյություն ունեցող օրենքները, սակայն նշում են նաև որ դրանք հետագա բարելավման կարիք ունեն: Ոչ այնքան օրենքները, որքան

վերջիններիս իրագործումն է հանդիսանում կրթության համակարգի գլխավոր խնդիրը: Ներկայիս իրավական համակարգը փորձագետների կողմից գնահատվում է որպես բավական առաջադեմ, սակայն խնդիրներ են առաջանում երբ գործը հասնում է օրենքների համապատասխան իրագործմանը: Հսկայական անհամապատասխանություն գոյություն ունի օրենքների և դրանց կիրառման մեջ: Քննադատության հիմնական թեմա է հանդիսանում դպրոցների քաղաքականացված լինելը: ՀՀ Հանրակրթության օրենքի ընդհանուր կրթության ազգային քաղաքականության մեջ նշվում է, որ կրթական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն[5]: Սակայն հետազոտությունը ցույց է տվել, որփորձագետների և դպրոցական տնօրինության շրջանում Հայաստանի կրթական համակարգում առկա քաղաքականացվածության առնչությամբ գոյություն ունի մտահոգությունների բարձր մակարդակ՝ բազմաթիվ օրինակների դրսևորմամբ: Գոյություն ունեն բազմաթիվ հիմնավորումներ ուղղված դպրոցական համակարգի անարդյունավետությանն դպրոցների տնօրենների քաղաքական կուսակցությունների անդամակցման մեծ քանակության պատճառով: Այս փաստը շեշտադրվել էշատ անգամ կանոնակարգերի, օրենքների և դրանց իրականացման մասին խոսելու ժամանակ: Փորձագետներն ու դպրոցների տնօրենները միանմանապես նշեցում են դպրոցական համակարգը որևէ քաղաքական պատկանելությունից տարանջատելու անհրաժեշտության մասին: Դպրոցները պետք է լինեն անկախ: Դպրոցների տնօրենների պաշտոնը մեծ մասամբ կախված է նրանց կուսակցական պատկանելիությունից, մի փաստ, որը միանգամայն հիշեցնում է սովետական ժամանակաշրջանի իրականությունը: Քաղաքականացված կրթական համակարգի խնդիրը նշվել է որպես ամենագլխավոր աշակերտների առաջադիմության, ուսուցիչների կողմից աշակերտների կարիքները հոգալու, ինչպես նաև դպրոցում դրական աշխատանքային միջավայր ստեղծելու խոչընդոտող գործոն:

Կրթական համակարգի քաղաքականացված լինելը անուղղակիորենխոչընդոտում էաշակերտների կրթության հասանելիությանը: Աշակերտները ներգրավում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք ստիպված են պարտադրել իրենց ծնողներին քվեարկել կոնկրետ մարդկանց օգտին և, այսպիսով, հայտնվել կախյալ վիճակում: Այս գործընթացումներառված են բոլորը՝ տնօրեններ, ուսուցիչներ, ծնողներ և աշակերտներ: Մենք ականատես ենք դառնում մի քաղաքականացված տնօրենների գործող համակարգի, ովքեր պատասխանատու են ձայներ ‘հավաքելու’ տվյալ կուսակցության համար: Կրթության մասին օրենքը

---

[5] ՀՀ Հանրակրթության օրենք, Հոդված 4, 2009թ:

բավականին ընդհանուր է անդրադառնում քաղաքակացվածության հարցին: Այն խստորեն չի կարգավորում դպրոցներում տեղի ունեցող իրականգործընթացները:

ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, որոշում է դրանց հիմքերը, փոփոխություններն ու ավարտը, ինչպես նաև նախատեսում է պայմաններ աշխատակիցների անվտանգության, առողջության վերաբերյալ խնդիրներ (*Labor Code of the Republic of Armenia*, 2004): Սակայն այն չի պարունակում որոշակի հղումներ ուսուցիչ – տնօրեն հարաբերությունների վերաբերյալ: Ուսուցիչների հետ ֆոկուս-խումբ քննարկումները ցույց տվեցին գոյություն ունեցող հիասթափությունը տնօրենների անխտիր բոլոր հարցերումվերահսկողությանմեծ դերի վերաբերյալ: Արդյոք կրթական համակարգը կարգավորող իրավական դաշտում կա կարիք փոփոխությունների հարցին, կարծիքներ լսվեցին օրենքի հատուկ հավելվածի հնարավոր առկայության մասին, որը կկարգավորի ուսուցիչ – տնօրեն հարաբերությունները: Ուսուցիչները ցանկանում են տեսնել որոշ փոփոխություններ ուսուցիչ – տնօրեն հարաբերությունները ղեկավարող մեխանիզմներում:

Դպրոցական խորհուրդների որպես պետական երկրորդական ինստիտուտների ստեղծման կարգընախատեսում է, որ տվյալ դպրոցի տնօրենը չի կարող լինել տվյալ դպրոցի խորհրդի անդամ: Խորհուրդը պետք է կազմված լինի 8 հոգուց՝ կառավարության ներկայացուցչի, տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի, ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ: (ՀՀ “Պետական երկրորդական հաստատություն” ՊՈԱԿ-ում կոլեկտիվ կառավարման մարմին ստեղծելու Հրաման, 2010):Դպրոցական խորհուրդների ստեղծման ամենագլխավոր պատճառներից մեկը դպրոցական կառավարումը տեղական դպրոցական խորհուրդների միջոցով կազմակերպելու անհրաժեշտությունն էր, ապահովելու է համայնքի մասնակցությունը և զարգացնելու է դպրոցի ժողովրդավարական կառավարման կազմակերպումը՝ ներառելով ծնողներին և ակնկալելով իրենց ավելի ակտիվ մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացին(Satenik Mkrtchyan and Ruzanna Tsaturyan, 2008):

Ֆոկուս-խումբ քննարկումների ժամանակ մի քանի ուսուցիչ արտահայտեցին ոչ պաշտպանված լինելու մասին իրենց մտահոգությունը, ինչը հաճախ բերում է նրան, որ իրենք ստիպված են մնալու տնօրենների քմահաճությանը չնայած դպրոցական խորհուրդների առկայությանը կրթական համակարգում: Դպրոցական խորհուրդներում տարբեր կառավարության մակարդակների ներկայացուցիչների ներգրավման իմաստն է նպաստել դպրոցներում ժողովրդավարական կառավարմանը և որոշումների կայացմանը՝ դպրոցների խնդիրների բաց և օբյեկտիվ

լուծումներ գտնելու նպատակով: Այսպիսով հետազոտությունը շեշտադրել է խորհուրդների օրենսդրական և իրական դերի միջև եղած տարբերությունը: Խորհուրդների ստեղծումը մի քայլ առաջ էր դեպի ավելի ժողովրդավար դպրոցական կառավարում, սակայն դրանց գործառնությանը վերաբերող հիասթափություններ կան:

Լսվեցին դեպքեր երբ որոշումները ուղղակիորեն կայացվում են տնօրենների կողմից միասնական մասնակցության փոխարեն:

Արդյունքում այս տեսակի ղեկավարությունը ստեղծում է լարված միջավայր տրված դպրոցի ուսուցիչների համար, մի փաստ որը անուղղակիորեն հանգեցնում է աշակերտների կրթության անհասանելիությանը: Հետևաբար ուսուցիչների ոչ պաշտպանված լինելու արդյունքում՝ վերոնշյալ պայմանները հանգեցնում են վերջիններիս ոչ ընկերասեր պահելաձևի աշակերտների նկատմամբ: Պաշտպանված միջավայրի ստեղծումը, այնպիսիին, որտեղ ուսուցիչները իրենց կզգան ապահով և ազատ – դառնում է առաջնահերթություն, քանի որ հենց իրենք՝ ուսուցիչները մշտապես գտնվում են աշակերտների հետ շփման մեջ: Այս փաստը անուղղակիորեն ազդում է ուսուցիչների և աշակերտների հարաբերությունների վրա:

*«1400 դպրոցից 1150 դպրոցի տնօրենները կուսակցության անդամ են: Դա խայտառակություն է: Այդ դպրոցը արդեն դպրոց չէ: Տնօրենը ստիպում է ուսուցիչներին միանալ ինչ-որ կուսակցության, այդ մարդիկ չեն ուզում, տնօրենը իրենց գործից ազատում է: Գյուղապետը հանձնարարում է դպրոցի տնօրենին կանչել ծնողներին, որ իրենք ձայն տան: Երեխաները ստիպված են լինում թվանշան ստանալու համար կանչել ծնողներին, որ իրենք քվեարկեն:»*
Փորձագետ

Լսվեցին նաև դրական արձագանքներ դպրոցներում օրենսդրական դաշտի վերաբերյալ փոփոխությունների մասին: Հարցված տնօրեններից մեկը անդրադարձավ դպրոցի օրենսդրության մեջ փոփոխություն կատարելու նախաձեռնությանը, որը հանգեցրել է օրենսդրության փոփոխության: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի Սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման և ազատման վերաբերյալ հոդված 16-ը նախատեսում էր 120-200 ժամ սովորողների բացակաների սահմանը (ՀՀ օրենքը հանրակթրության մասին, ՀՀ, 2009):

Բացակաների այս սահմանը ձևավորվել էր դպրոցի տնօրինության լայնածավալ բողոքների շնորհիվ նպատակ ունենալով փոփոխել նախկին դրույթը, համաձայն որի տրված երեխան ստիպված էր հինգ առարկաներից հանձնել քննություններ 120-160 ժամ բացակաների դեպքում: Փոփոխության հիմք հանդիսացավ մի ջրծաղիկով հիվանդ երեխայի արդարացված օրինակը՝ մի պայման

որը ստիպում է երեխային բացակայել դասերից վերը նշված ժամանակահատվածի ընթացքում:

Հետազոտության այս բաժնի հետազոտական հարցն է՝ ***Կարո՞ղ է արդյոք ՀՀ իրավական դաշտը բարելավել դպրոցական կրթության հասանելիությունը: Եթե այո, ապա ինչպե՞ս:***

Չնայած ՀՀ ներկայիս դպրոցական կրթությանը վերաբերող իրավական դաշտը բավականին լավ զարգացած է, այն թերություններ ունի իրագործման ոլորտում և անշուշտ բարելավվելու տեղ ունի: Դպրոցների տնօրենների քաղաքական պատկանելությունը բավական մեծ խնդիր է, որը պահանջում է իրավական միջամտություն՝ դպրոցի միջավայրի բացասական ազդեցությունը կանխելու նպատակով: Կրթական ոլորտը պետք է ամբողջովին առանձնացված լինի քաղաքական ճնշումներից: Սա պետք է ամրապնդվի հավելյալ իրավական փաստաթղթի առկայությամբ, որը հստակ կարգելի պետական մարմինների որևէ միջամտություն անթույլատրելիությունը և նման միջամտության հանդուրժումը դպրոցական տնօրինության կողմից: Կրթության և քաղաքական ոլորտների առանձնացման իրավական փաստաթղթի առկայության կարևորությունը նշվել է մի քանի անգամ հետազոտության ընթացքում:

## 4. Կրթության հասանելիությունը. ֆինանսական ասպեկտ

ՀՀ Կառավարության 'e-government' կայքի ինտերակտիվ բյուջեի տվյալների համաձայն 2012թ.հանրակրթական ոլորտի համար նախատեսված բյուջեն կազմում է 49 մլրդ. դրամ: Հանրակրթությանը հատկացված գումարը ընդհանուր առմամբ կայուն է (45 մլրդ. դրամ 2011թ. համար և 47 մլրդ. դրամ 2010թ.): Այն յուրաքանչյուր դպրոցի համար մոտավորապես կազմում է 35 մլն. դրամ: Սակայն սա շատ կոպիտ հաշվարկ է – այժմ դպրոցները ֆինանսավորվում են պետության կողմից տվյալ դպրոցում սովորող աշակերտների քանակի համաձայն:

ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը իրականացվում է ըստ աշակերտների թվի՝ հետևյալ բանաձևով՝ Ըգ = Սթ x Սգ + Պգ, որտեղ՝ Ըգ-ն մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ընդամենը գումարն է, Սթ-ն հաստատության սովորողների թիվն է, Սգ-ն մեկ սովորողին ընկնող տարեկան գումարն է, Պգ-ն հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարն է (ՀՀԿառավարություն, 2006):

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի և ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ որոշման համաձայն վերոնշյալ բանաձևի գործակիցները հետևյալն են՝Սգ

մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 66,956 դրամ, Պգ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը՝ 11450.0 հազ. դրամ: Հաշվարկը կատարվում է կիրառելով լրացուցիչ գործակիցներ բարձրլեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձրլեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.2 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.02 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով:

Որպես հաստատության սովորողների թիվ Սթ ընդունվում է աշակերտների միջին տարեկան թվաքանակը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին, հաշվի առնելով դասարանների փաստացի կոմպլեկտավորումը (ՀՀ Կառավարություն, 2006b):

Պետական հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման համակարգը 30 դպրոցներում կատարած սույն հետազոտության համաձայն կարելի է բաշխել երեք մասի՝ պետական բյուջեն որպես պարտադիր և գլխավոր ֆինանսավորող աղբյուր, օգնություն մասնավոր դոնորների և միջազգային կազմակերպությունների կողմից (սակայն ոչ բոլոր դպրոցներն են օգտվում տվյալ հնարավորությունից), ինչպես նաև օգնություն ծնողների կողմից, որը կախված է տվյալ համայնքում հաստատված սովորույթներիցև, մասնավորապես տվյալ տարածքում ռեսուրսների հասանելիությունից:

Հարցվածներին միավորող ընդհանուր պատասխանը է այն հարցին թե ինչքան շատ ֆինանսավորում ունենա տվյալ դպրոցը այնքանով այն ավելի արդյունավետ կգործառնի: Հարցված տնօրեններից գրեթե բոլորը դժգոհ են դպրոցների ֆինանսավորման աշակերտների թվաքանակի վրա հիմնված նոր համակարգից: Գրեթե բոլոր հարցված տնօրենները նշում են, որ պետական բյուջեից դպրոցի ստացվածի և դպրոցի իրական պահանջների միջևկա տարբերություն: Դպրոցների ֆինանսավորման ներկայիս համակարգի վերաբերյալ դժգոհությունները սակայն ունեն տարբեր պատճառներ: Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ մի քանի դիտարկված դպրոցներ ունեն աշակերտների շատ քիչ քանակ. առավելևս, այս փաստը նկատելի է գյուղերում: Սույնը հանգեցնում է մի կարևոր խնդրի դպրոցների կառավարման ֆինանսավորման համակարգում, երբ տնօրենները ստիպված են նվազագույնի հասցնել էլեկտրականության ու ջեռուցման ծախսերը: Դպրոցի բյուջեն աշակերտների թվի հետևկապելը վիճահարույց է: Որոշ դպրոցներ առավել լավ են աշխատում որպեսզի գրավեն աշակերտներին, բարելավեն իրենց ֆինանսական վիճակը, մինչդեռ որոշ դպրոցներ էլ, որ չեն հաջողում այս գործում, լուրջ խնդիրների

են բախվում սեփական գործառնությունների համար անհրաժեշտ մինիմալ ծախսերը հոգալու հարցում: Այս խնդիրը հատկապես զգալի էառավել ցայտուն ժողովրդագրական անկում ունեցող տարածքներում:

*«Աշակերտի թվով ֆինանսավորումը քանդեց հայոց դպրատունը: Այսօր ավագ դպրոցը չպիտի զնա մուրա հիմնական դպրոցից. Բնականաբար դա ազդում է [կրթության] որակի վրա:»* Տնօրեն, քաղաք

Դպրոցների դիտարկումների և տնօրենների հետ հարցազրույցների արդյունքում պարզվում է որ տնօրենների շրջանում ձևավորվել է դպրոցի լրացուցիչ ֆինանսավորում ստանալու համար դոնորներին դիմելու տենդենց, քանի որ պետական բյուջեով հատկացված գումարը բավարար չէ դպրոցների բոլոր ծախսերը հոգալու համար: Հարցված տնօրենների մեծ մասը բավականաչափ տեղյակ էին լրացուցիչ մասնավոր ֆինանսավորում փնտրելու հնարավորության մասին: Այցելած 30 դպրոցներից 8-ում գոյություն ունեն ցուցանակներ նվիրաբերած օգնությանտրամադրման մասին: Դրամաշնորհների դիմելու դեպքեր նույնպես արձանագրվել են տնօրենների հետ խորացված հարցազրույցների ժամանակ: Հարցված աշակերտների 32%-ը նշում է, որ գումար են վճարում դպրոցին (թե ամսեկան, թե տարեկան, թե ծնող կոմիտեների կողմից հավաքվող ընդհանուր գումար), 19%-ը տեղյակ չեն նման գործընթացի մասին: Բյուջեի բացը լրացնելու հիմնական ուղին ծնողների նվիրատվություններ են: Այս նվիրատվությունը կարող է լինել ինչպես չնչին ոչ-պաշտոնական վճարներ ընթացիկ ծախսերի համար, այնպես էլ հատուկ նպատակներով արված մեծ միանվագ վճարներ, ինչպիսին է օրինակ վերանորոգումը: Ծնողները այնքան էլ հստակ պատկերացում չունեն իրենց կողմից դպրոցին ցուցաբերվող ֆինանսական նվիրաբերությունների վերաբերյալ: Մինչդեռ մի քանիսը կարծում են որ իրենց երեխայի հաճախած դպրոցին օգնությունը նորմալ երևույթ է, շատերը կասկածներ ունեն նման փորձի վերաբերյալ: Նրանք գտնում են, որ դա զայրացուցիչ և անարդար հանգամանք է, «ամենացավալի խնդիր» և այլն: «Դպրոցի ֆոնդի» նպատակով ծնողներից գումար հավաքելը կարծես թե լայնատարած սովորություն է դառնում:

*«Ինձ համար դպրոցի ամենավատ կողմը դա դպրոցում գումարի պտտվելու հարցն է: Էլ չեմ նշում ուսուցիչներին նվեր գնելը: Ես խայտառակություն եմ համարում այն, որ ուսուցչին կարող են տալ 5000 դրամ և նա կվերցնի, և դա շատ ընդունված է:»* Մայր, 44 տարեկան, Երևան

Հետազոտության այս բաժնի համար նախատեսված հետազոտական հարցերն են՝ ***Ո՞րն է դպրոցներին հատկացվող միջին ֆինանսավորման չափը:Տարբերություն կա՞ արդյոք դպրոցի ստացած ֆինանսավորման եւ պատշաճ կրթություն ապահովելու համար անհրաժեշտ ռեսուրսների միջև:***
ՀՀ պետական հանրակրթական հաստատությունները ֆինանսավորում են տվյալ դպրոցի աշակերտների թվաքանակի հիման վրա, ինչպես նաև այլ գործոնների նկատառումով, ինչպիսին է օրինակ դպրոցի տեղակայումը: Ըստ մոտավոր հաշվարկի 2012թ. ՀՀ բյուջեով մեկ դպրոցին հատկացված գումարը կազմում է 35 մլն. ՀՀ դրամ: Ակնհայտորեն տարբերություն կա դպրոցներին փաստացի տրամադրվող ֆինանսավորմանն որակյալ կրթության ապահովման համարանհրաժեշտ ցանկալի ֆինանսավորման մակարդակների միջև: Որոշ դպրոցներ հաջողակ են լրացուցիչ ռեսուրսներ հայթայթելուհարցում, սակայն ընդհանուր առմամբ դպրոցի հիմնական կարիքները հոգալու բեռը, ինչպիսին է օրինակ վերանորոգումը կամ սենյակների մաքրության ապահովումը, հաճախ դրվում է ծնողների ուսերին: Նույնիսկ սույն ռեսուրսների առկայության դեպքում հարցվածները նշում են որ կա տարբերություն կրթության մատչելիության ապահովմանն ուղղված դպրոցների կարիքների և առկա ռեսուրսների միջև:

## 5. Կրթության հասանելիությունը. Ֆիզիկական ասպեկտ

Հաշվետվության այս բաժինը ուսումնասիրում է կրթության ֆիզիկական հասանելիության հետկապվածխնդիրներ, տրանսպորտային ծախսեր (թե գումարի և թե ժամանակի առումներով), դպրոցի շենքի ընդհանուր վիճակը, ինչպես նաև աջակից սենյակների առակայությունը և վիճակը(գրադարան, մարզասրահ լաբորատորիաներ, ճաշարան և այլն):

### 5.1 Դպրոցների և ուսուցչական անձնակազմի հասանելիությունը

Ըստ պաշտոնական տվյալների ուսուցիչների հարաբերությունը հանրակրթական դպրոցներում աշակերտների թվի նկատմամբ ներկայումս 1:9 է (Հայաստանի հանրապետության ազգային վիճակագրական ծառայությաւն, 2011 ): Այս առումով Հայաստանը նման է այլ հետխորհրդային երկրների և ավելի լավ վիճակում է, քան շատ այլ զարգացած երկրներ, որտեղ ուսուցիչ/աշակերտ հարաբերությունը ավելի բարձր է (ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտ, 2012):

Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ բնակչության 95%-ը նշում է, որ իրենց բնակության վայրի մոտակայքում դպրոց կա[6] (Հետազոտական ռեսուրսների

---

[6]Հետազոտությունը վերաբերվում է հանրակրթական դպրոցներին առանց ավագ և ընդհանուր դպրոցներիտարբերակման:

կռվկասյան կենտրոններ-Հայաստան, 2011): Սույն հետազոտության շրջանակներում կատարված աշակերտների հարցումը ընդհանուր առմամբ հաստատում է, որ դպրոցները հասանելի են աշակերտների բնակությանվայրերի մոտակայքում: Երեխաների 75%-ընշեց, որ դպրոց գնում է ոտքով, 12%-ը՝ ընտանիքի անձնական մեքենայով, 9%-ը՝ տրանսպորտով, 3%-ը օգտվում է տաքսիից և 2 աշակերտ միայն (0.4 %) ասացին, որ իրենք դպրոց են գնում դպրոցական ավտոբուսով:Դպրոց հասնելու միջին ժամանակը 12 րոպե է, հարցվածների 92%–ը 20 կամ մինչև 20 րոպեում հասնում են դպրոց, 45 րոպեն գրանցվել է որպես դպրոց հասնելու ամենաերկար ժամանակը (2 աշակերտ, 0.4%): Նրանք, ովքեր պետք է վճարեն դպրոց հասնելու համար (12%), միջինում վճարում են 260 դրամ: Դպրոց հասնելու ծախսերի մասին ավելի շատ ինֆորմացիա ստանալու համար (տե՛սԱղյուսակ 3):

Աղյուսակ 3 [Եթեվճարումեքդպրոցհասնելուհամար] ապահինչքա՞ն TCPA OSF Survey

| | N | % | Valid % |
|---|---|---|---|
| 50-100 դր | 30 | 7 | 54 |
| 150-500 դր | 18 | 4 | 32 |
| 600-1000 դր | 8 | 2 | 14 |
| Ընդամենը | 56 | 12 | 100 |

Այս հետազոտության շրջանակներում ուսումնասիրված դպրոցներ տանող գլխավոր ճանապարհների մեկ երրորդը բավականին վատ վիճակում են: 0 - 5սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է «գոյություն չունի» և 5-ը «իդեալական», չորս դպրոցների ճանապարհների վիճակը գնահատվել է 1 միավորով, մնացած6 դպրոցները՝ 2 միավոր: Սա գյուղական տարածքների խնդիր է, որտեղ ընդհանուր գնահատականը ըստ դիտարկման պարամետրի 2.47 է, համեմատած 3.71 Երևանի և այլ քաղաքների հետ: Հարցված աշակերտների 23%-ը հայտարարեցին, որ երբեմն ճանապարհի վատ վիճակի պատճառով իրենք չեն կարողանում հասնել դպրոց, 3%-ն էլ ասում են, որ դա լինում է «հաճախ» կամ «շատ հաճախ»:

### 5.2 Դպրոցներիի շենքերը և ընդհանուր պայմանները

Դպրոցների ֆիզիկական տեսքիդիտարկումները վեր հանեցին մի շարք ակնառու տարբերություններ. նորակառույց և լավ կահավորված դպրոցներից մինչև քայքայված կառույցներ: Չնայած դիտարկման գլխավոր նպատակը ըստ նախապես մշակված դիտարկման քարտերի հիման վրա տվյալներիթվային գնահատումների հավաքագրումն էր, որոշ դեպքերում դիտարկողները ներկայացրել ենտեքստային մեկնաբանություններ, ինչպես օրինակ՝

*Դպրոցը փտում է խոնավության պատճառով, հատակը սարսափելի վիճակում է: Աշակերտները պետք է ավլեն դասարանները դասերից հետո. դասարանները փոշոտ են, ամենուրեք խոնավության հոտ է զգացվում:* (դիտարկման քարտ 8, գյուղի դպրոց)

*Ջեռուցումը իրականացվում է դիզելային վառելիքով: Գազատարը անցնում է անմիջապես դպրոցի վրայով: Դպրոցն ունի կաթսայատուն, սակայն գազով ապահովված չէ:* (դիտարկման քարտ13, գյուղի դպրոց)

Աշակերտների 12%-ի կարծիքով սովորելու համար իր դպրոցը հարմարավետ վայր չէ: Երեխաների կողմից տրված մեկնաբանություններից են. «Վատ պայմաններ/վերանորոգման կարիք» (15 պատասխան), «ջեռուցում չկա» (7 պատասխան), «պոչամբար»[7](5 պատասխան):
Նմանապես ընդհանուր հարցվածների 11%-ը իր դպրոցի ընդհանուր ֆիզիկական վիճակը գնահտում է «վատ» կամ «շատ վատ»: Դրական կողմն այն է , որ հարցված աշակերտների 33%-ը իրենց դպրոցի ընդհանուր ֆիզիկական վիճակը գնահատում է «շատ լավ» (տե՛ս աղյուսակ 4-ը): Գյուղերի երեխաները իրենց դպրոցը համարում են քիչ հարմարավետ[8] և ավելի քիչ են բավարարված իրենց դպրոցի ընդհանուր ֆիզիկական վիճակով:[9]

Աղյուսակ 4 Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է ձեր դպրոցի ընդհանուր ֆիզիկական վիճակը (կառույց, պատեր, դասարաններ, լույս, ջեռուցում և այլն ) TCPA OSF Survey

| | | Frequency | Percent | Valid Percent |
|---|---|---|---|---|
| Valid | Շատ վատ | 7 | 1.6 | 1.6 |
| | Վատ | 43 | 9.6 | 9.7 |
| | Լավ | 250 | 55.6 | 56.2 |
| | Շատ լավ | 145 | 32.2 | 32.6 |
| | Ընդամենը | 445 | 98.9 | 100.0 |
| Missing | | 5 | 1.1 | |

[7]Հետզոտված դպրոցներից մեկն ուներ պոչամբար իր տարածքում.բոլոր պատասխանները այս դպրոցից են: Դիտորդներին ասել են, որ այս գյուղի տղամարդիկ առողջական խնդիրներ ունեն (փաստագրված է ըստ զինապարտների առողջական վիճակի ուսումնասիրության):
[8] One-way ANOVA F (2, 443) = 22,746; p < 0.01. Mean values (on a scale from 1 “not at all” to 4 “absolutely yes”): Yerevan 3.16, town 3.54, village 2.99.

[9]One-way ANOVA F (2, 442) = 13,570; p < 0.01. Mean values (on a scale from 1 “very bad” to 4 “very good”): Yerevan 3.15, town 3.43, village 3.04.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 450 | 100.0 | | |

ՀՀ Կառավարությունը պլանավորում է վերանորոգել բոլոր հանրակրթական դպրոցները, ներառյալ ջեռուցման համակարգերի տեղադրումը մինչև 2012թ. ծախսելով կապիտալ ծախսերի ոլորտի միջնաժամկետ պետական ծախսերի 8-10%-ը (ՀՀ Կառավարություն, 2008):

«Ավագ դպրոցների» հիմնանորոգման ծախսերի ծրագրի սահմաններում վերակառուցման աշխատանքներ են իրականացվել հանրապետության 8 ավագ դպրոցներում ծախսելով 267,163,500 ՀՀ դրամ (ՀՀ Քաղաքաշինության նախարարություն, 2012թ. գործունեության հաշվետվություն):

Դպրոցների ֆիզիկական պայմանների անհամաչափությունները նույնպես տեսանելի են որակական հետազոտության արդյունքում: Խորացված հարցազրույցների ժամանակ 3 թիրախային խմբերն էլ(դպրոցների տնօրեններ, կառավարության ներկայացուցիչներ և փորձագետներ) հաճախ նշում են դպրոցների ֆիզիկական պայմանների՝ մասնավորապես վերանորոգման անհրաժեշտության մասին: Դպրոցների տնօրենների կողմից սույնը հաճախ նշվում է որպես դպրոցի գլխավոր խնդիր: Մյուս կողմից դպրոցի ֆիզիկական պայմանների բարելավվումը հաճախ նշվել է որպեսդպրոցական կրթության համակարգում հաջողված պատմություն: Սակայն մեկ բան ընդհանուր է – թե վերանորոգված և թե ոչ վերանորոգված դպրոցներում, բոլորը դիտարկում են վերանորոգումը որպես դպրոցի գոյատևման ամենագլխավոր գործոն:

*«Առաջին ձեռքբերումն այն է, որ նախ որպես աղետի գոտի մենք ունեցանք նորմալ դպրոցներ իրենց ջեռուցման և այլ նորմերին համապատասխան, քարաշեն, լուսավոր:Դպրոցները տանկային տնտեսությունից դուրս եկան :»* Գյուղ համայնքի ղեկավար

*«Ամենահրատապ խնդիրը դպրոցի վերանորոգումն է, դպրոցը 1970թ-ից ի վեր /դպրոցի հիմնումից/ հիմնանորոգում չի տեսել:»* Դպրոցի տնօրեն, Երևան

*«Մենք պետք է հովանավորներ գտնենք, դպրոցը հիմնանորոգման կարիք ունի: Գյուղի հարցն էլ որ լուծվի, գազաֆիկացվի, արդեն ջեռուցումը կկատարվի գազի միջոցով, և ավելի կհեշտացվի: Բավարար է մեր շենքային պայմանները բարելավեն և մենք էլ կպահպանենք, սահմանն էլ հետը:»* Դպրոցի տնօրեն, սահմանամերձ գյուղ

### 5.3 Դպրոցներում ուսումնաօժանդակսենյակներիհասանելիությունը

30 դպրոցներում կատարված դիտարկումները ցույց են տվել, որ բացի համակարգչայինլաբորատորիայից և գրադարանից, որտեղ գրեթե խնդիրներ չկան,

ուսումնաօժանդակ սենյակների(լաբորատորիաներ, մարզասրահներ, ճաշարաններ, աշխատանքի ուսուցմանսենյակներ, բժշկական սենյակ) առկայությունը դպրոցական կրթության ֆիզիկական հասանելիության ամենախնդրահարույց կետերից է: Ըստ դիտարկման արդյունքների 12 դպրոցներ չունեն բժշկական սենյակ, 11-ը՝ մարզասրահ, 11-ը՝ աշխատանքի ուսուցման սենյակ, 10-ը՝համակարգչային լաբորատորիա և 8-ը՝ ճաշարան: Այս ուսումնաօժանդակսենյակների գնահատման միջին միավորը ամենացածրն է դիտարկվող այլ ասպեկտների համեմատ: Սույնը վերաբերում է, թե՛ գյուղական և թե՛ քաղաքային տարածքներին(տե՛ս հավելված 5):

Հարցման արդյունքը ցույց է տալիս հետևյալ պատկերը՝մինչ գրադարաններն ու համակարգչային լաբորատորիաները հասանելիության և որակի առումով որոշակիորեն խնդրահարույց են, մարզասրահները հասանելի են հարցվածների 84%-ին, դրանց ընդհանուր պայմանները 5%-ի կողմից գնահատվում են «շատ վատ», և «վատ» (13%): Հարցված աշակերտների 20%-ը երբեք չեն օգտագործում հավելյալ սարքավորումներ ֆիզկուլտուրա դասընթացի ժամանակ:

**Երևանում, քաղաքներում և գյուղերում մարզասրահների ընդհանուր պայմանների գնահատականների միջև վիճակագրորեննշանակալիտարբերություններ[10]կան: Երևանը գտնվում է լավագույն տեղում, որին հաջորդում են քաղաքներն ու գյուղերը: «Գլխավորապես ի՞նչը կցանկանայիք փոխել ձեր դպրոցում»ամենահաճախ հանդիպող պատասխանն է՝ «բարենորոգ մարզասրահ» (38%), «դպրոցի ֆիզիկական պայմաններ» (35%), «դասագրքերը» (33%):** Պատկեր4

Աղյուսակ 5-ում ներկայացված են դպրոցում փոփոխությունների վերաբերյալ աշակերտների ցանկությունները:

Աղյուսակ 5 Դպրոցներում այլ սենյակների առկայությունը TCPA OSF Survey

| Ձեր դպրոցում ունեք… | N of "Yes" | % of "Yes" | Ընդհանուր պայմանները 1-ից 5 սանդղակի վրա որտեղ 1՝ (շատ վատ)4՝ (շատ լավ) |
|---|---|---|---|
| Գրադարան | 436 | 97 | 3.05 |
| Համակարգչային լաբորատորիա | 430 | 96 | 3.16 |
| Համակարգչային լաբորատորիայում ինտերնետի առկայություն | 310 | 69 | |
| Մարզասրահ | 378 | 84 | 2.91 |

[10] One-way ANOVA F (2,380) = 13,456; p < 0.01. Mean scores (on a scale from 1 "very bad" to 4 "very good") are 3.11 for Yerevan, 2.79 for towns and 2.72 for villages.

Պատկեր4Ի՞նչը կցանկանայիք փոխել ձեր դպրոցում? TCPA OSF Survey, multiple response, (N of answers, % of cases)




Մարզադահլիճների պայմանները նշվելեննույնպեսֆոկուս-խումբքննարկումներիևհարցազրույցներիժամանակ:

*«Ես պատասխան եմ մեր համայնքի դպրոցի վերաբերյալ, չունենք մարզադահլիճ, ֆիզկուլտուրայի ժամերն ասֆալտի վրա են արվում, ձմեռն էլ դպրոցի միջանցքում: Այն որակը չէ:»* Գյուղ համայնքի ղեկավար

*«Կուզենայինք ունենալ լավ սպորտդահլիճ: Դա ամենաթանկ հաճույքն է:»* Ուսուցչուհի, 60 տարեկան, քաղաք

Ֆոկուս-խումբ քննարկումների ժամանակ բացասական արձագանքներ լսվեցին ճաշարանների մասին: Դպրոցները չունեն ճաշարաններ կամ դրանք չեն համապատասխանում նույնիսկ հիմնական ցանկալի չափորոշիչներին, այսինքն ճաշարանում վաճառվող սննդի որակը նույնիսկ չի էլ ստուգվում: Ծնողներից մեկը նշեց, որ դպրոցի ղեկավարությունը չի վերահսկում մատակարարող կազմակերպության կողմիցտրամադրվող սննդի որակը:

Մարդիկ դպրոցի ֆիզիկական տեսքի և երեխաների վատ առաջադիմության միջև պատճառահետևանքային կապ են տեսնում:

Ժամանակակից ձևավորված դպրոցները անհրաժեշտություն են դարձել ներկայիս կրթական ոլորտի զարգացումների և փոփոխությունների հետ համահունչ քայլելու համար:

Մարզադահլիճների առկայությունը դպրոցներում նշվել է որպես առավել անհրաժեշտ և ցանկալի գործոն: Հետաքրքրական է, որ ոչ միայն աշակերտներն են այդպես մտածում, այլ նաև ծնողներն ու ուսուցիչները համարում են մարզադահլիճի առկայությունը որպես դպրոցի արդյունավետ գործառնության համարառավել կարևոր հանգամանք: Դիտարկված դպրոցներից մեկը գտնվում էր շատ վատ ֆիզիկական պայմաններում՝ դասասենյակները, ուսուցչանոցը, միջանցքը, պատուհանները և զուգարանները ներառյալ: Սակայն դպրոցն ուներ նոր վերանորոգված մարզադահլիճ, որն առանձնանում էր իր թարմ և մաքուր տեսքով:

Ուսումնասիրության այս բաժնի հետազոտական հարցերն են՝ ***Որո՞նք են դպրոցական կրթության ֆիզիկական հասանելիության ամենագլխավոր և ամենաաննշան խնդիրները:***

Հարցման, ֆոկուս-խմբերի և դպրոցների դիտարկումների համաձայնՈւսումնաօժանդակ սենյակների (մարզադահլիճներ, ճաշարանները, աշխատանքի ուսուցման սենյակներ, բժշկական սենյակներ)առկայությունը հանդիսանում է դպրոցական կրթության ֆիզիկական հասանելիության ամենագլխավոր խնդիրը: Դպրոցների առկայությունը (ոտքի ճանապարհի հեռավորության կամ տրանսպորտային միջոցի օգնությամբ կարճ ժամանակում հասնելու հնարավորությամբ), ինչպես նաև ուսուցիչների հարաբերակցությունը աշակերտների թվին ամենաաննշան խնդիրներն են: Դպրոցների շենքերի ֆիզիկական պայմանները շատ տարբեր են և սա շարունակում է մնալպատշաճ ուսումնական գործընթացըսահմանափակող լուրջ գործոն:

## 6. Կրթությանհասանելիությունը.նյութատեխնիկական ասպեկտ

Ուսումնասիրության այս բաժինը դիտարկում է դպրոցներում ուսումնական սարքավորումների (համակարգիչներ, համացանց, տեսա-ձայնային սարքավորումներ, ցուցադրական նյութեր՝քարտեզներ, պլակատներ, նմուշներ և այլն.) առկայությունը և դրանցորակը: Այն բաժինը հիմնված է կրթության հասանելիության ֆիզիկական ասպեկտի դպրոցներում ուսումնաօժանդակ սենյակների և սարքավորումների առկայության և ընդհանուր որակի քննարկումների վրա: Դասագրքերի որակը նույնպես դիտարկվում է այս բաժնում:

### 6.1. Համակարգչային սենյակ

ՀՀ Կառավարության ծրագրի համաձայն նախատեսված է պետական միջոցներով հետևողականորեն վերազինել բոլոր դպրոցները համակարգիչների անհրաժեշտ

քանակությամբ, որոնց մեծամասնությունը կապված է լինելու միջ-դպրոցական ցանցին (Government of the Republic of Armenia, 2008):

Համակարգչային տեխնոլոգիաների տարածումը ՀՀ դպրոցներում հարցված փորձագետների և դպրոցների տնօրենների կողմիցնշվել է որպես վերջին շրջանի փոփոխությունների ձեռքբերում: Սակայն դպրոցական կրթության հասանելիության այս ասպեկտը միանշանակ չէ:

Դպրոցների դիտարկումները ցույց են տվել, որ դպրոցների համակարգչային սենյակների պայմաններում զգալի հակասություններ կան: Սա հանդիսանում է երրորդ ամենալավ դիտարկված գործոնը Երևանի և այլ քաղաքների համար 4.14 (հինգ բալանոց սանդղակով) միջինով, իսկ գյուղական դպրոցների միջինը 2.64 է:

Աշակերտները համակարգիչ բավական հաճախ են օգտագործում:Նրանց մեծամասնությունը օգտագործում է այն շաբաթական մեկ կամ երկու անգամ: Հետաքրքրական է, որ Երևան քաղաքի աշակերտները օգտագործում են համակարգիչ ավելի քիչ այլ քաղաքների և գյուղերի աշակերտների համեմատ (սա կիրառվում է այն դպրոցներին որտեղ առկա է համակարգչային սենյակը), և այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է[11] (տե՛ս Պատկեր 5): Աշակերտների 44%-ը նշում են, որ համակարգչային սենյակներում դասարանի բոլոր երեխաների համար բավարար թվով համակարգիչներ չկան: Գյուղերի աշակերտները առավել հազվադեպ են նշում համակարգչի բացակայության մաhին[12], 85%-ըասում է, որ կցանակային օգտագործել այն ավելի հաճախ:

Պատկեր 5 Որքա՞նհաճախեքօգտագործումձերդպրոցիհամակարգչայինսենյակըTCPA OSF Survey, %




---

[11] One-way ANOVA: F (2,431) = 9,566; p < 0.01

[12] Responses from villages differ significantly from Yerevan and other towns (One-way Anova F (2,436) = 6,844; p < 0.01). Mean values on a scale from 1 “not at all” to 4 “absolutely enough” are Yerevan 2.63, town 2.18, village 2.38.

՛Թե ինչո՞ւ համակարգչային սենյակը չեն օգտագործում այնքան հաճախ որքան կցանկանային՚ հարցի ամենատարածված պատճառն է ժամանակի բացակայությունը, սակայն 82 աշակերտ (հարցին պատասխանած աշակերտների24%-ից)նշում են, որ սենյակը փակ է շատ ժամանակ և մնացած 80 աշակերտները նշում են, որ չեն խրախուսվում այն օգտագործելու համար (տե՛ս Աղյուսակ 6 Ինչո՞ւ չեք օգտագործում համակարգչային սենյակում գտնվող համակարգիչները այնքան որքան կցանկանայիք TCPA OSF Survey):

Աղյուսակ 6 Ինչո՞ւ չեք օգտագործում համակարգչային սենյակում գտնվող համակարգիչները այնքան որքան կցանկանայիք TCPA OSF Survey

| | N | Valid % |
|---|---|---|
| Չունեմ ժամանակ | 105 | 31.1 |
| Շատ ժամանակ սենյակը փակ է | 82 | 24.3 |
| Սենյակըբացէ, բայց մեզ ասում են, որ մեզ համար չէ | 80 | 23.7 |
| Այլ | 65 | 19.2 |
| Չգիտեմ ինչպես օգտագործել | 6 | 1.8 |
| Ընդամենը | 338 | 100 |

Դպրոցների դիտարկումները նույնպես պարզել են, որ լավ համակարգչային սենյակի առկայությունըդեռևս երաշխիք չէ որ երեխաները օգտվենդրանից: Դիտարկման քարտերից մեկը պարունակում է հետևյալ գրառումը`

*<<Ընդհանուր առմամբ դպրոցը հիանալի վիճակում է, բայց մենք նկատեցինք որ երեխաները դասերից հետո հաճախում են մի տեղական ՀԿ համակարգիչներից և ինտերնետից օգտվելու նպատակով, ինչը նշանակում է, որ իրենք ունեն դպրոցում համակարգիչներից օգտվելու սահմանափակ հնարավորություն – մի փաստ, որը հաստատվեց նաև տվյալ ՀԿ-ի տնօրենի և ՀԿ հաճախող աշակերտների կողմից :>>*
(Դիտարկման քարտ 26, քաղաք)

Համակարգչային սենյակների առկայությունը և պայմանները նույնպես քննարկման առարկա էին ֆոկուսխմբերի ժամանակ:

*«Մեր դպրոցի մասին հեռուստացույցով ասում են, որ լավ համակարգչային դասարան ունի, բայց իմ աղջիկը ոչ մի անգամ դեռ այդ դասարան չի մտել: Արդեն 4 տարի է ինչ անցնում են ինֆորմատիկա, բայց ոչ մի անգամ չեն եղել այդ դասարանում:»* Մայր, 44 տարեկան, Երևան

## 6.2. Այլ լաբորատորիաներ և ուսումնական սարքավորումներ

Ըստ հարցման արդյունքների աշակերտների 16%-ը բնական գիտությունների դասերի ժամանակ երբևէ փորձեր չեն իրականացնում: Նրանցից, ովքեր իրականացնում են 80%-ը իրենք են օգտագործում սարքավորումները: Տնօրենները, ծնողները և ուսուցիչները նույնպես անհանգստացած են բնական գիտությունների դասերի համար նախատեսված հատուկ սարքավորումների և հետևաբար երեխաների փորձի բացակայությամբ:

Օրինակներ բերվեցին թե ինչպես են ուսուցիչները իրենց դասավանդած առարկաները ավելի դյուրին և պարզ դարձնելու նպատակով լուծում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են անհրաժեշտ սարքավորումների բացակայությունը:

*«Հիմա մենք Արամ Խաչատրյան ենք անցնում ու չլսել նրա Գայանե, Սպարտակ բալետի երաժշտությունը –դա ոնց որ վերացական է: Այդ պատճառով ես խոսք եմ տվել, որ բերեմ համապատասխան սարքավորում և երեխաները լսեն:»* Ուսուցչուհի, 60 տարեկան, քաղաք

«Քիմիայից ոչ մի փորձ չեն անում: Իմ տղան, որ այդա առարկան շատ է սիրում, անընդհատ նշում է. – Ի՞նչ քիմիա, եթե մենք չենք տեսնում այն փորձերը, որ գրածեն գրքում:» Մայր, 43 տարեկան, Երևան

## 6.3. Դասագրքեր

Դասագրքերը համարվում են ՀՀ ներկայիս դպրոցական կրթության ամենագլխավոր խնդիրներից մեկը: Դասագրքերը հանդիսանում են երրորդ ասպեկտը որը երեխաները կցանկանային փոփոխել (տե՛ս Պատկեր4): Ֆոկուս խմբերի ժամանակ ծնողների և ուսուցիչների կողմից նույնպես առկա էին բողոքներ: Խնդիրները բազմաթիվ են՝ գրքերի քաշ, որ հանգեցնում է առողջական խնդիրների երբ երեխան ստիպված է լինում կրել այդ ծանր բեռն ամեն օր,դասագրքերի բովանդակություն, որակ (որոշ դասագրքեր բավական պարզ են, սակայն որոշներն էլ գրված այնպիսի լեզվով, որը նույնիսկ ուսուցիչներն են դժվարանում հասկանալ), անհամապատասխանություն պետական ծրագրերի և դասագրքերի բովանդակության մեջ, պահանջվող գիտելիքի այն մակարդակը, որն անհրաժեշտ է ԲՈՒՀ ընդունվելու համար, փորձի փոխանակման հնարավորության բացակայությունը մանկավարժական տեսանկյունից և այլն: Բազմաթիվ անգամ նշվել է նաև, որ աշխատանքային տետրերը անհրաժեշտություն չեն և բավական թանկ են, ինչը հավելյալ բեռ է դառնում ծնողների համար: Դա հավասարապես բեռ է նաև ուսուցիչների համար, ովքեր չեն կարող պատճենահանել այդ տետրերը իրենց

աշակերտների համար և ովքեր պարզապես չեն կարողանում ներկայացնել ամբողջ նյութը դասաժամի սղության պատճառով:

*«Ես տնօրենին ստիպված էի ասել, որ աղջկաս թույլ չեմ տալիս 10 դասագիրք ամեն օր բերել դպրոց:»* Մայր, 33 տարեկան, Երևան

*«Հայաստանի տարածքը պատմության դասագրքում կարդում ես 330.000 է, մյուսում 300.000 ու արդեն չգիտես՝ ինչ ասես: Մի հեղինակ որոշել, որ թագավորի անունը ուրիշ է:»* Ուսուցչուհի, 31 տարեկան, քաղաք

*«Նենց տերմինոլոգիայ է, որ գիրքը բացում ու վախենում են: Ու խնդրում են, որ մենակ մեր բացատրածով գան դասը պատմեն: Իսկ գիրքը չի ուզում բացի:»* Ուսուցչուհի, 53 տարեկան, Երևան

*«Ֆիզկուլտուրայի դասագիք են կազմել երկրորդ դասարանի: Էդ գումարը ինչո՞ւ են ծախսում:Գրած է, թե հավսարի ժամանակ ինչպես կանգնես, զգաստի ժամանակ՝ ինչպես: Չէ՞ որ մենք այդ ցույց ենք տալիս:»* Ուսուցիչ, 61 տարեկան, Երևան

Ուսումնասիրության այս բաժնի հետազոտական հարցերն են՝ ***Որոնք են ՀՀ դպրոցական կրթության հասանելիության նյութատեխնիկական ասպեկտի ամենագլխավոր և ամենաանհշան խնդիրները:***

Կրթության հասանելիության նյութատեխնիկական ասպեկտի ամենագլխավոր խնդիրըդասագրքերն են: Դասագրքերի իրավիճակը բավական տխուր է՝ գոյություն ունի լայնատարած դժգոհություն դասագրքերի որակի վերաբերյալ աշակերտների, ծնողների և ուսուցիչների շրջանում: Բողոքների ճնշող մեծամասնությունը վերաբերվում է դասագրքերի բովանդակությանը: Դժգոհությունները վերաբերվում են գրեթե բոլոր առարկաների դասագրքերին, որոնք նույնիսկ ծնողները դժվարանում են հասկանալ:

Համակարգիչների ֆորմալ առկայությունը ամենաաննշան խնդիրն է: Այս հետազոտության ժամանակ դիտարկված դպրոցների մեծամասնությունը ունեն համակարգչային սենյակներ համակարգիչների որոշակի քանակությամբ: Սակայն ոչ բոլոր դպրոցները դրանք պարբերաբար օգտագործելու փորձունեն: Տարբերդպրոցներում գործող համակարգիչերի քանակը տարբեր է: Գործող համակարգիչների մինիմալ քանակը համակարգչային սենյակում՝ 2-3ն է: Հարցման արդյունքների համաձայն աշակերտները բողոքում են համակարգիչները օգտագործելու ժամանակի բացակայությունից, կամ դրանք օգտագործելու

չխրախուսված լինելուց: Դեպքեր հայտնաբերվեցին, երբ երեխաները չեն թույլատրվում օգտագործել համակարգչային սենյակներ, կամ ուղղակիորեն չունեն այդ սենյակ մուտքի հնարավորություն:

Երևանում գոյություն ունեն ավելի շատ համակարգչային սենյակներ և դրանց վիճակը ավելի լավն է, սակայն դրանք ավելի քիչ են օգտագործվում: Քաղաքներում և մասնավորապես գյուղերում գոյություն ունեն ավելի քիչ համակարգչային սենյակներ և դրանց վիճակն ավելի վատն է, սակայն նշված բնակավայրերի այն դպրոցներում, որտեղ կան նման սենյակներ աշակերտները դրանք օգտագործում են ավելի հաճախ: Քաղաքների աշակերտները իրենց դասարանների քանակի համեմատունեն բավական համակարգիչներ, սակայն այս առումով ամենաբարենպաստ խումբը գյուղերի աշակերտներն են: Երբեմն համակարգչային սենյակ գոյություն ունի, բայց այն չի օգտագործվում փակ լինելու կամ երեխաների խրախուսված չլինելու պատճառով: Բնական գիտությունների լաբորատորիաները բացակայում են կամ ապահովված չեն համապատասխան սարքավորումներով, աշակերտների մեծամասնությունը չունի փորձերը դիտարկելու կամ իրականացնելու հնարավորություն:

Ուսուցիչները դժգոհում են ուսումնական նյութերի պակասությունից, որոշ ուսուցիչներ խնդիրը լուծում են անհրաժեշտ նյութերը իրենց տանից բերելով:

Համակարգչային սենյակներից օգտվելու գործըթացը կանոնակարգողներքին իրավական փաստաթղթի առկայությունը կբարելավվի կրթության հասանելիության մուտքը հանրապետությունում, մասնավորապես քաղաքներում և գյուղերում:

Չնայած դպրոցական կրթության հասանելիության նյութատեխնիկական ասպեկտիամենաանշան խնդիրն համակաչգիչների օգտագործումն է համակարգչային սենյակներում, ըստ հարցման արդյունքների շատ աշակերտների թույլ չի տրվում մուտք գործել դպրոցի համակարգչային սենյակ:

Առաջարկվում է ստեղծել կառավարության համապատասխան որոշում,ըստ որի դպրոցների տնօրենները պարտավոր լինեին լիազորված մարմնին որոշակի սահմանված ժամանակահատվածում հաշվետվություն տրամադրել տվյալ տվյալ դպրոցում աշակերտների կողմից համակարգիչների կանոնավոր օգտագործման մասին: Գուցե հաշվառումը պահպանելու միջոցը կխրախուսի աշակերտների շրջանում ավելի լայնատարած և հաճախակի համակարգիչների օգտագործում:

## 7. Կրթության հասանելիությունը. կադրային ասպեկտ

Ուսումնասիրության այս բաժնում քննարկվում է, թե արդյոք կրթական ոլորտում առկա են բավարար քանակի ուսուցիչներ, վարչական և այլ աջակցող

անձնակազմ, ժամանակակից ուսուցման մեթոդներ, ինչպես նաև աշակերտների հետ ուսուցիչների աշխատելու և հարաբերվելուկարողությունը, ուսուցիչների պրոֆեսիոնալիզմի հետևապված խնդիրներ և մարտահրավերներ, ինչպես նաև նմանատիպ այլ հարցեր: Այս բաժինն անդրադառնում է նաև այն ուսուցիչներին, ովքեր միաժամանակ դասավանդում են տարբեր առարկաներ, նրանց՝անհրաժեշտության դեպքում դասը կրկին բացատրելու պատրաստակամությանը,աշակերտի անկարգության դեպքումուսուցիչների վարքին, ինչպես նաև դպրոցներում համապատասխան կադրերի առկայությանը և ուսուցիչների ու դպրոցի վարչական անձնակազմի վարվելակերպովաշակերտների բավարարվածությանը:

## 7.1 Անձնակազմի ընդհանուր հասանելիությունը և որակը

Կրթական Տեխնոլոգիաների Ազգային կենտրոնի համաձայն (National Center of Educational Technologies, 2012) ՀՀ պետական հանրակրթական հաստատություններում աշխատող ուսուցիչների քանակը կազմում է 41,757: ՀՀ-ում աշխատող բոլոր ուսուցիչների 91%-ը ունեն մանկավարժական կրթություն: ՀՀ բոլոր ուսուցիչների 26%-ը աշխատում է Երևանում, մինչդեռ 74%-ը մարզերում (տե՛ս Աղյուսակ 7 Ուսուցիչների քանակը ՀՀ-ում): Իգական սեռի ուսուցիչները կազմում են Երևանում ընդհանուր ուսուցիչների թվի 89%-ը: Մարզերում դիտարկվում է հետևյալ պատկերը՝ իգական սեռի ուսուցիչները կազմում են 82%-ը, մինչդեռ արական սեռի ուսուցիչները՝ 18% (տե՛ս Աղյուսակ 8): Այսպիսով ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կանայք են, սակայն մարզերում Երևանի համեմատ ավելի շատ են արական սեռի ուսուցիչներ:

Աղյուսակ 7 Ուսուցիչների քանակը ՀՀ-ում

| | N | % | N մանկավարժական կրթությամբ | % մանկավարժական կրթությամբ |
|---|---|---|---|---|
| Երևան | 10,832 | 25.9 | 9,594 | 23 |
| Մարզեր | 30,925 | 74.1 | 28,465 | 68 |
| Ընդամենը | 41,757 | 100 | 66,524 | 91 |

Աղյուսակ 8 ՀՀ ուսուցիչներն ըստ սեռի և մայրաքաղաք/մարզերի

| | Ար (N) | Իգ (N) | Ար (%) | Իգ (%) |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| Երևան | 1,214 | 9,618 | 11.2 | 88.8 |
| Մարզեր | 5,426 | 25,499 | 17.5 | 82.5 |
| Ընդամենը | 6,640 | 35,117 | | |

Հանրապետությունումգոյությունունեցողբոլորուսուցիչների 86%-ըունենբարձրագույնկրթություն, գրեթե 12%-ը թերի բարձրագույն, 1%-ը մասնագիտական կրթություն, իսկ 0.1%-ըն 0.4%-ը ստացել են իրենց կրթությունը չհավատարմագրված ԲՈՒՀ-ից և միջնակարգ դպրոցից համապատասխանաբար (տե՛ս Աղյուսակ 9**Error! Reference source not found.**)։

Ինչպեսերևումէաղյուսակ 10-ում, Երևանում կան ավելի շատ բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ և ավելի քիչ թերի բարձրագույն կրթությամբ ամբողջ մարզերի միասնական պատկերի համեմատ։

Աղյուսակ 9 ՀՀ ուսուցիչների կրթությունը

| | N | % |
|---|---|---|
| Բարձրագույն | 36,028 | 86.3 |
| Թերի բարձրագույն | 4,963 | 11.9 |
| Միջին մասնագիտական | 537 | 1.3 |
| Չհավատարմագրված ԲՈՒՀ | 56 | 0.1 |
| Միջնակարգ | 173 | 0.4 |
| Ընդամենը | 41757 | 100 |

Աղյուսակ 10 ՀՀ ուսուցիչների կրթությունը ըստ մայրաքաղաք/մարզերի

| | | N | % |
|---|---|---|---|
| Բարձրագույն | Երևան | 9,940 | 27.6 |
| | Մարզեր | 26,088 | 72.4 |
| Թերի բարձրագույն | Երևան | 786 | 15.8 |
| | Մարզեր | 4,177 | 84.2 |
| Միջին մասնագիտական | Երևան | 72 | 13.4 |
| | Մարզեր | 465 | 86.6 |
| Չհավատարմագրված ԲՈՒՀ | Երևան | 8 | 14.3 |
| | Մարզեր | 48 | 85.7 |
| Միջնակարգ | Երևան | 26 | 15 |
| | Մարզեր | 147 | 85 |
| Ընդամենը | | 41757 | |

Աշակերտների 67%-ը հայտնում է, որ ունեն ուսուցիչներ, որոնք դասավանդում են մի քանի առարկաներ (տես՝ Աղյուսակ 11-ը՝ լրացուցիչ մանրամասների համար):

Աղյուսակ 11 Քանիուսուցիչներենդասավանդումմիքանիառարկաներ

| Ուսուցիչների թիվ | N | % |
|---|---|---|
| 0 | 56 | 15.7 |
| 1-2 | 126 | 35.4 |
| 3-4 | 148 | 41.6 |
| 5-10 | 26 | 7.3 |

Երեխաները բավական դրական են արտահայտվում դասը կրկին բացատրելու ուսուցիչների պատրաստակամության մասին եթե աշակերտները դասը լավ չեն հասկացել: Այս հարցի վերաբերյալ կան վիճակագրական նշանակալի տարբերություններ Երևանի և այլ քաղաքների ու գյուղերի միջև. այլ քաղաքների և գյուղերի աշակերտները համարում են, որ իրենց ուսուցիչները ավելի պատրաստակամ ենանհաժեշտության դեպքում դասը կրկին անգամ բացատրել (տե՛ս Պատկեր 6):

Պատկեր 6 Ձեր ուսուցիչները պատրաստակամ են բացատրել դասը ևս մեկանգամ եթե աշակերտները այն չեն հասկացել:




Ընդհանուր առմամբ աշակերտները գոհ են իրենց դպրոցի ուսուցիչների և վարչական անձնակազմի աշխատանքից (տե՛ս աղյուսակ Աղյուսակ 12 լրացուցիչ մանրամասների համար):

Աղյուսակ 12 Խնդրում եմ նշեք թե որքան եք բավարարված.

| | N | Mean on a scale from 1 (not at all) to 4 (very satisfied) |
|---|---|---|
| Դպրոցում դասավանդման ընդհանուր որակից | 423 | 3.36 |
| Ձեր ուսուցչի՝ տեղեկատվությունը դյուրին և հասկանալի մատուցելու ունակությունից | 415 | 3.36 |
| Ձեր ուսուցչի՝ դասերը հետաքրքիր դարձնելու կարողությամբ | 423 | 3.25 |
| Ճաշարանի անձնակազմի աշխատանքից | 365 | 3.04 |
| Գրադարանավարի ցուցաբերած աջակցությունից | 407 | 3 |
| Դպրոցի բժշկական անձնակազմի աշխատանքից | 389 | 2.89 |

Դպրոց կատարած դիտորդական այցերը ընդհանուր առմամբ բացահայտեցին ուսուցիչների՝ դասերի ընթացքում կարգապահություն պահպանելու բավականին բարձր կարողությունը: Աշակերտների հետ կատարած հարցման համաձայն, ուսուցիչների կողմից կիրառվող ամենատարածված կարգապահական միջոցը բղավելն է, որին հաջորդում է զանգ ծնողներին և խնդրանք լքել դասարանը: Աշակերտների 15%-ը նշում է, որ որպես կարգապահական միջոց ուսուցիչների կողմից կիրառվում է վիրավորանքը, ևս 8%-ը հայտնում է, որ իր նկատմամբ կիրառվել է ֆիզիկական ոտնձգություն (հարված) (տե՛ս Աղյուսակ 13-ը՝ լրացուցիչ մանրամասների համար):

Աղյուսակ 13 Ուսուցիչներիկողմիցկիրառվողկարգապահականմիջոցներ:

| | N of responses | % of pupils |
|---|---|---|
| Բղավել | 168 | 40.0 |
| Զանգ ծնողներին | 155 | 36.9 |
| Խնդրանք լքել դասարանը | 135 | 32.1 |
| Ուղեկցում տնօրենի մոտ | 98 | 23.3 |
| Ցածր գնահատական | 89 | 21.2 |
| Վիրավորանք | 64 | 15.2 |
| Դեմքով դեպի պատը անկյունում կանգնել | 44 | 10.5 |
| Հարվածել | 35 | 8.3 |
| Այլ միջոցներ | 17 | 4.0 |
| Ընդհանուր | 850 | 191.7 |

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ֆիզիկական ոտնձգության դեպքերը (հարված, կամ դեմքին ապտակ)այնքան էլ տարածված չեն, հարվածի և դեմքին ապտակ հասցնելու դեպքեր այնուամենայնիվ գրանցվել են, և այս հանգամանքի

վերաբերյալ թե՛ ծնողները և թե՛ ուսուցիչները դրսևորում են հակասական մոտեցումներ: Չկա ընդհանուր կարծիք, թե ինչպես պետք է վերաբերվել այն ուսուցչին ով կիրառել է նման միջոց: Մինչդեռ թե ծնողներից և թե ուսուցիչներից շատերը պնդում են, որ իրենք նման մոտեցումը համարում են անընդունելի, այնուամենայնիվ կան նաև նմանատիպ կարծիքներ.

*«Երեխաներ կան որ ընտանիքից սովորեն խփելու, իրենք միայն դրանից են սաստվում:»* Ուսուցչուհի, 22 տարեկան, Երևան

*«Իմիջիայլոց արժի հիմա ապտակել երեխաներին, հիմա մենակ այդ վախնէ, որ կարող է երեխային պահի ուրիշ մեթոդ չունենք, համատարած անպատժելիությունէ:»* Ուսուցչուհի, 50 տարեկան, Երևան

Դպրոց կատարած դիտորդական այցերի ընթացքում անձանագրվել է նաև վարչական անձնակազմի առկայությունը: Բոլոր դպրոցները ունեն պահակ, հավաքարարներ, շատ դպրոցներ ունեն գրադարանավար, հաշվապահ և քարտուղարներ (տե՛ս աղյուսակ Աղյուսակ 14 Վարչական անձնակազմի

առկայությունը դպրոցներում:

լրացուցիչ մանրամասների համար, աղյուսակ Աղյուսակ 15Աղյուսակ 15 տրամադրում է տեղեկատվություն վարչական անձնակազմի կրթության վերաբերյալ):

Աղյուսակ 14 Վարչական անձնակազմի առկայությունը դպրոցներում:

| | Yes |
|---|---|
| Պահակ | 30 |
| Հավաքարար | 30 |
| Գրադարանավար | 28 |
| Հաշվապահ | 27 |
| Քարտուղար | 22 |
| Ճաշարանի աշխ. | 19 |
| Բուժքույր | 17 |
| SS մասնագետ | 16 |
| Լաբորանտ | 11 |

| | |
|---|---|
| Հոգեբան | 6 |
| Մենեջեր | 5 |
| Գանձապահ | 5 |
| Անվտանգության աշխ. | 1 |

Աղյուսակ 15 Վարչական անձնակազմի կրթությունը:

| # | Կրթություն | N |
|---|---|---|
| Հոգեբան (Աշխ. տարիների միջին 5) | | |
| 1. | Բարձրագույն կրթություն | 3 |
| 2. | Հատուկներառականկրթությունը | 1 |
| 3. | Մանկավարժական կրթություն | 2 |
| Ընդամենը: | | 6 |
| | Բուժքույր(Աշխ. տարիների միջին 13) | |
| 1. | Բարձրագույն կրթություն | 3 |
| 2. | Մասնագիտական կրթություն | 14 |
| Ընդամենը: | | 17 |

| | Համակարգչային մասնագետ (Աշխ. տարիների միջին 13) | |
|---|---|---|
| 1. | Բարձրագույն կրթություն | 9 |
| 2. | Մանկավարժական կրթություն | 3 |
| 3. | Դպրոցական կրթ. | 1 |
| 4. | Տեխնիկական կրթություն | 1 |
| 5. | Մասնագիտական կրթություն | 1 |
| Ընդամենը: | | 15 |

## 7.2. Նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում

Հարցազրույցների ընթացքում հաճախ նշվում էր, որ դպրոցական կրթական համակարգում բարեփոխումների հաջողությունը հիմնականում կախված է ուսուցիչների կատարողականից, քանի որ նրանք հանդիսանում են «բարեփոխումների հիմնական կրողները»: Հարցվողների մեծ մասը կարևորում է ուսումնական մեթոդների փոփոխության հրատապ անհրաժեշտությունը՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակակից միջավայրին, նոր չափանիշներին և իրականացվող ծրագրերին: Գոյություն ունի անհամապատասխանություն իրականացվող բարեփոխումների պահանջների և դպրոցներում ներկա պայմանների միջև: Նոր մեթոդների կիրառումը պահանջում է համապատասխան պայմանների առկայությունը դպրոցներում:

Խմբակային քննարկումների ընթացքում ուսուցիչները բողոքում էին, որ նրանք չունեն անհրաժեշտ ռեսուրսներ պատշաճ ուսուցում իրականացնելու համար, հատկապես եթե ուսուցումը պետք է իրականացվի նորագույն մեթոդներով: Ոմանք ասում են, որ իրենց ստիպում են դասավանդել նորագույն մեթոդներով, այն դեպքում երբ այդ մեթոդները մշակվել են առանց հաշվի առնելու դասարաններում տիրող իրականությունը: Իսկ վերապատրաստումները ֆորմալ բնույթ են կրում և պատշաճ տեղեկատվություն չեն տրամադրում:

*«Թողնրանք, ովքերայդնորմեթոդներըստեղծելեն, ընունելեն,թողմիհատիրանքզանփորձարկեն, զգան:Ինքըկարո՞ղ էայդնորմեթոդներովդասարանպահել:»* Ուսուցչուհի, 44 տարեկան, Երևան

*«Հարցեստալիս, չգիտիինչքեզպատասխանի, նաի՞նչվերապատրաստող:»*Ուսուցչուհի, 53 տարեկան, Երևան

Ընդհանուր առմամբ աշակերտները դրական են արտահայտվում դասբավելի հասկանալի և հետաքրքիր դարձնելու նկրկին բացատրելու ուսուցիչների պատրաստակամության վերաբերյալ: Նրանք գոհ են իրենց ուսուցիչների և վարչական անձնակազմի որակից և թվով քիչ միջադեպ (8.3%) են արձանագրում, երբ հարվածը կիրառվել է որպես պատժի միջոց: Երեխաների 15%-ըարձանագրում է, որ իրենց ուսուցիչը վիրավորական արտահայտություններէ կիրառելորպես կարգապահական միջոց: Որոշ ուսուցիչներ արդարացնում են երեխային ապտակ հասցնելը՝ ասելով, որ կան երեխաներ, որոնց կարգապահ դարձնելու/կարգի հրավիրելու համար դա միակ միջոցն է: Ուսուցիչները բողոքում են, որ իրենց նկատմամբ ճնշում է գործադրվում ուսուցման նորագույն մեթոդները կիրառելու համար, որոնք նրանք համարում են անիրատեսական՝ հաշվի առնելով ներկա պայմանները: Իսկ վերապատրաստումները, որ կազմակերպվում են իրենց համար, նրանք դիտարկում են որպես ժամանակի վատնում, քանի որ դրանք ցածրորակ են և զուրկ կոնկրետ բովանդակությունից:

Ուսումնասիրության այս բաժնի հետազոտական հարցերնէին՝ ***Ո՞րն է Հայաստանում կրթական ոլորտում կադրերի առկայության առավել խնդրահարույց կողմը: Ո՞րն է ավելի քիչ խնդրահարույց կողմը:***

450 աշակերտներից 126-ը նշում են, որ ունեն 1-ից 2 ուսուցիչ, ովքեր միաժամանակ դասավանդում է մի քանի առարկա, իսկ 148 աշակերտ արձանագրում է, որ 3-ից 4 ուսուցիչներ դասավանդում են մի քանի առարկա: Խնդիրներից մեկը կապված ուսուցիչների սակավ քանակի հետ և ֆինանսական բնույթ է կրում՝ կախված դպրոցների սահմանափակ բյուջեից: Սա թերևս հանդիսանում է առավել խնդրահարույց կողմը երկրի կրթական ոլորտում կադրերի առկայության խնդրի վերաբերյալ: Դրա արդյունքում դպրոցները ձեռք են բերում այնպիսի ուսուցիչներ ունենալու փորձ, որոնք դասավանդում են միաժամանակ մի քանի առարկա:

Պարզվում է, որ բարձրագույն կրթության որակը կարելի է ապահովվել այն դեպքում, երբ յուրաքանչյուր առարկայի համար կա առանձին ուսուցիչ, ինչը թույլ է տալիս մասնագետին կետրոնանալ իր մասնագիտական առարկայի վրա՝ ճկուն և

միաժամանակ մի քանի առարկայի ուսումնական ծրագրի համար պատասխանատու լինելու փոխարեն:

Կրթական ոլորտում կադրերի առկայության խնդրի վերաբերյալ մյուս խնդրահարույց կողմը հանդիսանում է դպրոցներում բուժքույրերի առկայության հարցը: Այցելած դպրոցների մեծ մասը, հատկապես այն դպրոցները, որոնք գտնվում են քաղաքներում և գյուղերում, իրենց հաստիքացուցակներում չունեն բուժքույրերի հաստիք: Տարածված պրակտիկա է հանդիսանում այն, որ մի գյուղի կամ քաղաքի բուժքույրը միաժամանակ սպասարկում է մի քանի դպրոցներ: Դիտարկված 30 դպրոցներից միայն 17-ը ունեն բուժքույր: Քաղաքների և գյուղերի դպրոցների մեծ մասը ունեն մեկ բուժքույր տվյալ տարածաշրջանում: Հիմնականում նրանք այցելում են դպրոցներ մեկ ժամով առավոտյան ժամերին: Բուժքույրի հրատապ անհրաժեշտության դեպքեր չեն գրանցվել, սակայն դա կարելի է համարել հարցի խնդրահարույց կողմ՝ հաշվի առնելով աշակերտների առողջական խնդիրները, որ կարող են հանկարծ ծագել:

Կրթական ոլորտում կադրերի առկայության խնդրի վերաբերյալ ավելի քիչ խնդրահարույց կողմ է հանդիսանում այլ վարչական անձնակազմի առկայությունը: Բոլոր դպրոցներն ունեն պահակ և հավաքարարներ և գրեթե բոլորն ունեն գրադարանավար:

## 8. Կրթության հասանելիությունը սահմանափակող գործոններ. աղքատություն

Այս բաժնում քննարկվում է աղքատության ազդեցությունը աշակերտների առաջադիմության վրա, գնահատականների և նրանց՝ դպրոցական կյանքում ընդհանուր ներառվածության համատեքստում: Դիտարկվում են նաև համայնքների կողմից աղքատ երեխաների տրվող աջակցությունը և աղքատության ազդեցությունը ուսուցիչների աշխատանքի և կարգավիճակի վրա:

### 8.1. Դպրոցահասակ երեխաների շրջանում առկա աղքատության ընդհանուր գնահատում

Հարցումներում ներառված աշակերտների մեծ մասը տանն ուսանելու համար անհրաժեշտ պայմաններ ունեն. 81%-ը տանն ունեն իրենց սեփական գրասեղանը:

Վերջիններս դպրոցում առավել հակված են միջինից բարձր առաջադիմություն[13] ցուցաբերել: Հարցվածների համարյա 90%-ը տանը բավականաչափ հարմարավետ են զգում տնային աշխատանքների վրա կենտրոնանալու համար, 12%-ը հայտնում են, որ իրենք միշտ կամ հաճախ ստիպված են բացակայել դասերից, տարբեր աշխատանքներով կատարում իրենց ընտանիքներին օգնելու նպատակով: Այս խնդիրն առավել տեսանելի է գյուղերում[14] (տես Պատկեր 7): Հարցված երեխաների մեծամասնությունը հայտնում են նաև, որ ունեն բավականաչափ հիմնական պարագաներ /սնունդ, հագուստ, ժամանակ և այլն/ դասերից եռ չմնալու համար (տե՛ս Պատկեր 8):

Պատկեր 7 Եղե՞լ է, որ բացակայեք դպրոցից, քանի որ պետք է օգնեք ձեր ընտանիքին:




[13] Առաջադիմության և աղքատության միջև առկա կապի բացահայտման նպատակով երեխաներին հարցրել են նրանց մաթեմատիկայի, հայերեն և օտար լեզուների կիսամյակային գնահատականների մասին: Այս գնահատականները միջինացվել են դառնալով չափանիշ դպրոցական առաջադիմության չափման համար: Գրասեղան ունեցողների միջին գնահատականը 7.8 է, մինչդեռ գրասեղան չունեցողների մոտ այդ ցուցանիշը 7.3 է: Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է. T-test $t(335) = -2.744$, $p < 0.01$

[14] One-way ANOVA shows statistically significant differences between regions: $F (2,434) = 5,108$; $p < 0.01$; mean values 3.26 (Yerevan), 3.39 (town), 3.11 (village).

Պատկեր 8 Ունեք ստորև նշվածների բավական քանակություն/որակ որպեսզի լավ սովորեք TCPA OSF Survey, %




## 8.2. Աղքատության ազդեցությունը դպրոցական առաջադիմության վրա

Դպրոցահասակ երեխաների հետ անցկացված հարցումների արդյունքները վկայում են այն մասին, որ աղքատության և դպրոցում առաջադիմության միջև որոշակի կապ գոյություն ունի: Կիսամյակային գնահատականների և տան պայմանների ընկալումների, ընդհանուր բարեկեցության և հիմնական պարագաների միջև վիճակագրորեն նշանակալի կոռելյացիաներ կան: Ավելի ցածր միջին գնահատական ունեցող աշակերտները նաև ավելի պակաս հարմարավետ են զգում տանը իրենց դասերի վրա կենտրոնանալու համար[15] և ավելի պակաս ժամանակ ունեն տնային աշխատանքների վրա ծախսելու համար[16]: Ավելի ցածր միջին գնահատականներ ունեցող աշակերտները քանակական և որակական առումներով նաև պակաս ունեն իրենց կրթությանը նպաստող այնպիսի պայմանների, ինչպիսիք են սնունդ[17], տրանսպորտ[18], համակարգիչ[19] և ժամանակ[20]:

---

[15] Pearson correlation: $r = 0.191$, $N = 342$, $p < 0.001$ (two tailed)
[16] Pearson correlation: $r = 0.122$, $N = 346$, $p < 0.05$ (two-tailed)
[17] Pearson correlation: $r = 0.145$, $N = 316$, $p < 0.01$ (two-tailed)
[18] Pearson correlation: $r = 0.033$, $N = 321$, $p < 0.01$ (two-tailed)
[19] Pearson correlation: $r = 0.160$, $N = 322$, $p < 0.01$ (two-tailed)
[20] Pearson correlation: $r = 0.123$, $N = 323$, $p < 0.05$ (two-tailed)

Այս հետազոտության ընթացքում հավաքագրված որակական բնույթի տվյալներն իմաստ են հաղորդում սահմանափակ ռեսուրսների և ցածր դպրոցական առաջադիմության միջև հայտնաբերված կապին: Աղքատ մարզերի ուսուցիչները հատկապես քաջատեղյակ են իրենց աշակերտների ծանր կենցաղային պայմաններին և այն ազդեցությանը, որ դա կարող է ունենալ նրանց կրթության վրա:

*«…Երեխան նստած տեղը մտածում է գնամ անտառից փայտ բերեմ, որովհետև ընտանիքի միակ մեծ երեխան ինքն է: Ես վեցերորդ, յոթերորդ դասարանի երեխա ունեմ, որ հարցնում ես ինչի տնայինը չի գրել, տեսնում ես որ ռուսերենն իրեն բացարձակապես չի հետաքրքրում, հոգնած-ջարդած, քաղցած նստածէ, չգիտես այս օր կերել է թե ոչ: Ունենք բավականին մեծ քանակի նման երեխաներ:»* Ուսուցչուհի, 44 տարեկան, քաղաք

*«Փոխանակ երեխան զբաղվի իր դասերով՝ ծանրաբեռնված է իր ընտանիքի հոգսերով: Մեկը իր փոքր եղբորն է պահում, մեկը մոր հետ գնում է բուրդ մշակում: Երեխան ժամանակ չունի դասին նախապատրաստվելու, և ուսուցչի քառասուն րոպե տված դասաժամով երեխան չի կարող լիովին պատրաստվի դասին առանց տանը պատրաստվելու:»* Ուսուցչուհի, 37 տարեկան, քաղաք

Ֆոկուս խմբերին մասնակցած թե՛ ուսուցիչները և թե՛ ծնողներն ընդհանուր առմամբ նշում են, որ դպրոցին տրվող ցանկացած տիպի ֆինանսական աջակցություն, ինչպիսիք են օրինակ դպրոցի ֆոնդին կանոնավոր կերպով տրվող ֆինանսական միջոցները, դժվար են հատկապես այն ծնողների համար, ովքեր մեկից ավելի երեխաներ ունեն դպրոցում:

*«Այդ պատճառով էլ ես իմ երեխաներին ասել եմ – կամ կոմպյուտեր, կամ պապան մեզ հետ-նրանք պապային են ընտրել:»* Մայր, 36 տարեկան, գյուղ

Սոցիալական ծանրպայմաններում ապրող երեխաները դժվարանում են աշխատանքային տետրեր գնել, կամ էլ վճարել դասագրքերի վարձույթի համար անհրաժեշտ «փոքր» գումարները: Նշվել են նաև աղքատ երեխաներին բնորոշ հոգեբանական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հարուստ երեխաների հետ միասին ուսանող սոցիալապես առավել անապահով երեխաների թերարժեքության բարդույթները:

*«Ես աղջիկ ունեի դասարանում, որ ամաչում էր հեռախոսը հաներ, անգամ որ զանգում էին, ես զգում էի, որ ինքը պայուսակի մեջ անջատում է հեռախոսը: Չէ՞ որ, մենակ հեռախոսը չէ, կոշի՛կն է,հագո՛ւստն է,տարբեր պարագաներ»:* Ուսուցչուհի, 50 տարեկան, Երևան

Փորձագետները նշում են նաև ընտանիքներում երեխաների աշխատելու հետ կապված մի շարք խնդիրներ, որ դասերից բացակայելու պատճառ են դառնում: Աղքատ ընտանիքների երեխաները առավել խոցելի են այս իմաստով: Նաև կարծիք կա այն մասին, որ տղաներն առավել խոցելի են, քան աղջիկները:

*«Դա քրեական հանցագործություն է ծնողի կողմից, դա երեխայի կրթության իրավունքի խաթարում է, որը նշանակում է, որ տվյալ ծնողը քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի անկախ իր տնտեսական օգուտներից, որը ստանում է երեխային շահագործելու միջոցով:»* Փորձագետ

*«Ի տարբերություն շատ երկրների, որտեղ գենդերային խնդիրը առաջանում է, որովհետև աղջիկները գնում են տուն, ամուսնանում են, կամ տանն են նստում, Հայաստանում տղաները դպրոց չեն գնում, գնում են աշխատելու ծնողների հետ, օգնելու: Սուտ է, որ աղքատը լավ է սովորում, բացառություններ կան, իհարկե, որոշ հանճարներ: Բայց դա նախկինում էր:»* Փորձագետ

Թե՛ ծնողները և թե՛ ուսուցիչները համակարծիք են այն հարցում, որ աղքատությունը անհրաժեշտաբար չի նշանակում ցածր առաջադիմություն, և աղքատ երեխաները երբեմն դասարանի ամենալավ երեխաներն են:

## 8.3. Տեղային և ոչ ֆորմալ լուծումներ

Դպրոցական առաջադիմության վրա աղքատության ունեցած ազդեցության մասին են նշում նաև հետազոտության առավել տարիքով մասնակիցները (փորձագետներ, պաշտոնյաներ, դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, ծնողներ): Առաջարկվող լուծումները հիմնականում համայնքային և անհատական մակարդակում են:

*«Ես չէի ասիս սահմանափակել, բայց որ իր ազդեցությունն ու հետևանքներն ունի դա միանշանակ է: Մենք ամեն տարի փորձում ենք ճշտել այն երեխաների թիվը որոնք դպրոցական հագուստի, գրքերի պատճառով չեն կարողանում դպրոց հաճախել: Նմանատիպ երեխաների խնդիրը փորձում ենք լուծել մեր ֆինանսական աջակցությամբ:»* Գյուղ համայնքի ղեկավար

*«Եղել են դեպքեր երեխան աշնանը դասի չի եկել: Շատ չեմ մեկնաբանի կասեմ միայն, որ երեխան չուներ կոշիկ ես եմ գնել իմ գրպանից ու նաև այնպիսի հարց եմ դրել, որ չլինի դպրոցում մի երեխա, որ սոցիալական պայմանների պատճառով դասի չգա:»* Տնօրեն, քաղաք

Տեղյակ լինելով աղքատ երեխաների դպրոցում ունեցած խնդիրներին, ֆոկուս խմբերի շատ մասնակիցներ կարծում են, որ համայնքը կարող է մեղմել այդ խնդիրներից շատերը, եթե դրանք լուծի անհատականացված ձևով: Կարծիք կա այն մասին, որ աղքատ երեխաների ֆինանսական կարիքների մասին հաճախ հոգում են մյուս ծնողները, ուսուցիչները, դպրոցի կառավարող անձնակազմը, դասընկերները, այնպես որ սոցիալապես անապահով երեխաները ցուցաբերվող օգնության մասին տեղյակ չլինեն:

## 8.4. Աղքատությունն ուսուցիչների շրջանում

Աղքատությունը խոչընդոտում է կրթությանը ոչ միայն երեխաների ցածր առաջադիմության իմաստով, բայց նաև այն ազդեցության իմաստով, որ այն ունենում է կենսապայմանների ապահովման նպատակով իրենց գերծանրաբեռնող ուսուցիչների աշխատանքային առաջխաղացման և հեղինակության վրա:

Ուսուցիչների ցածր աշխատավարձերը մեծացնում են նաև կոռուպցիոն ռիսկերը: Որոշ ծնողներ պնդում են որ աղքատ ուսուցիչները ավելի շատ կաշառք են վերցնում, մինչդեռ առավել բարենպաստ սոցիալական պայմաններում ապրողները հետևում են որոշակի նորմերի և ավելի օբյեկտիվ են:

Աշխատավարձերից բացի նշվում է նաև ուսուցչի կարգավիճակի հարցը: Ուսուչիցները բողոքում են, որ իրենք ընկալվում են որպես ձախողակներ, քանի որ բավականաչափ գումար չեն կարողանում աշխատել:

Ուսումնասիրության այս բաժնի հետազոտական հարցերն էին՝ ***Արդյոք տարբերություն կա երեխաների դպրոցական առաջադիմության մեջ կախված իրենց սոցիալ-տնտեսական իրավիճակից: Արդյոք տարբերություն կա երեխաների դպրոցի հետ կապված պատկերացումների մեջկախված իրենց սոցիալ-տնտեսական իրավիճակից:***

Հետազոտությունը գտել է դպրոցային առաջադիմության տարբերության ամուր ապացույցներ (թե՛ քանակական, թե՛ որակական) կախված երեխաների սոցիալ-տնտեսական իրավիճակից: Սոցիալապես առավել ծանր պայմաններ ունեցող երեխաները ունեն ավելի ցածր առաջադիմություն: Հետազոտությունը ցույց է տվել, որ չկա տարբերություն երեխաների վերաբերմունքի միջև կախված նրանց սոցիալ-տնտեսական վիճակից:

## 9. Կրթությունը սահմանափակող դիրքորոշային գործոններ. կանխակալ վերաբերմունք

Այս բաժինը դիտարկում է ուսուցիչների կողմից դպրոցահասակ երեխաների սոցիալ տնտեսական կարգավիճակի, կրոնի, ազգային պատկանելության և վատ

առաջադիմության հիմքերի վրա ցուցաբերվող կանխակալ վերաբերմունքը: Ընդհանուր առմամբ, աշակերտների կարծիքով ուսուցիչները տարբեր խմբերի պատկանող աշակերտներին /աղքատ երեխաներ, կրոնական, էթնիկ փոքրամասնություններ, աղջիկներ/տղաներ, մյուս աշակերտներից տարբեր տեսք և հագուստ ունեցող երեխաներ, Սփյուռքի ներկայացուցիչներ, Հայաստանի այլ մարզերի երեխաներ, ցածր առաջադիմություն ցուցաբերող երեխաներ / վերաբերվում են համարյա նույն կերպ: Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը կարծում են, որ աշակերտների վերոնշյալ խմբերին վերաբերվում են այնպես, ինչպես դասարանի մյուս անդամներին: Միակ խումբը, որի դեպքում նկատվում է բացասական պատասխանների նշանակալի քանակ, վատ առաջադիմություն ունեցող երեխաներն են: Հարցվածների 30% ասել են, որ իրենց վերաբերվում են վատ, կամ շատ վատ (տես Պատկեր 9):

Պատկեր 9 Ինչպես են ուսուցիչները վերաբերվում հետևյալ խմբերին մյուսների համեմատ: TCPA OSF Survey, %




Եթե այս խմբերը դասավորենք ըստ միջին արժեքի /1՝շատ վատ, 5՝ շատ լավ սանդղակի վրա/, ապա ըստ հարցված աշակերտների՝ աղջիկներին և Սփյուռքի ներկայացուցչներին ավելի լավ են վերաբերվում(տե՛ս Աղյուսակ 16):

Աղյուսակ 16 Ինչպեն են վերաբերվում ուսուցիչները հետևյալ խմբերին մյուսների համեմատ: TCPA OSF միջին արժեք

| | Միջին (1 «շատ վատ» - 5«շատ լավ») |
|---|---|
| Աղջիկները տղաների համեմատ | 3.2 |
| Սփյուռքի ներկայացուցիչներ | 3.18 |
| Ծանր սոց. պայմ. գտնվող /աղքատ/ երեխաներ | 3.1 |
| Էթնիկ փոքրամասնություններ | 3.1 |
| Հագուստով և տեսքով տարբերվող երեխաներ | 3.07 |
| Կրոնական փոքրամասնություններ | 3.02 |
| ՀՀ մեկ այլ տարածաշրջանի երեխաներ | 3.02 |
| Վատ առաջադիմություն ունեցող երեխաներ | 2.76 |

Նմանատիպ հարց տրվել էր վերոնշյալ խմբերի ընկալումը սեփական ընկերների կողմից գնահատելու համար: Ընդհանուր պատկերը նման է նախորդին. Նկատվում է ուժեղ հավատ առ այն, որ այդ խմբերը ստանում են այնպիսի վերաբերմունք, որը չի տարբերվում մյուսների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքից: Այնուամենայնիվ, կրոնական փոքրամասնությունների դեպքում 13%-ը հավատում է, որ ընկերներն իրենց ավելի վատ են վերաբերվում, իսկ նրանց 8%-ը հավատում է, որ իրենք ավելի վատ վերաբերմունքի են արժանանում ուսուցիչների կողմից (տե՛ս Պատկեր 10 **Error! Reference source not found.**):

Պատկեր 10 Ինչպես են աշակերտները վերաբերվում հետևյալ խմբերին մյուսների համեմատ:




Ըստ միջին արժեքի դասավորելու դեպքում /1՝շատ վատ, 5՝ շատ լավ սանդղակի վրա/, համարվում է, որ Սփյուռքի ներկայացուցիչները սեփական

ընկերների կողմից ավելի լավ վերաբերմունքի են արժանանում, մինչդեռ կրոնական փոքրամասնությունները ցուցակի ամենաներքևում են (տես
):

Աղյուսակ 17 Ինչպես են աշակերտները վերաբերվում հետևյալ խմբերին մյուսների համեմատ: TCPA OSF Survey, %

| | Միջին (1 «շատ վատ» - 5 «շատ լավ») |
|---|---|
| Սփյուռքի ներկայացուցիչներ | 3.12 |
| Հագուստով և տեսքով տարբերվող երեխաներ | 3.03 |
| ՀՀ մեկ այլ տարածաշրջանի երեխաներ | 3.02 |
| Ծանր սոց. պայմ. գտնվող /աղքատ/ երեխաներ | 2.99 |
| Էթնիկ փոքրամասնություններ | 2.98 |
| Վատ առաջադիմություն ունեցող երեխաներ | 2.95 |
| Կրոնական փոքրամասնություններ | 2.91 |

Հավաքագրված որակական տվյալները վերոնշյալ խմբերի նկատմամբ ցուցաբերվող բացասական վերաբերմունքի բացատրության որոշ տարբերակներ են առաջարկում: Ընդհանուր առմամբ, հարցվածները և ֆոկուս խմբերի մասնակիցները նշում են, որ ուսուցիչները բավականաչափ հնարավորություններ չունեն, որպեսզի անհատականացված վերբերմունք մշակեն և ցուցաբերեն յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, քանի որ աշակերտների քանակը դասասենյակում սովորաբար քսանից ավելի է: Այս հանգամանքը հաճախ բերում է որոշ աշակերտների առանձնահատուկ խնդիրների նկատմամբ ցուցաբերվող անտարբեր վերաբերմունքի: Աղքատ աշակերտների նկատմամբ ցուցաբերվող բացասական վերաբերմունքի օրինակներ են՝

*«Մատիտը մի քիչ փոքրանում է ասում է սաղբարկղից ես գտել բերել, երեխային վիրավորումա:»* Մայր, 42 տարեկան, քաղաք

*«Մեր դասղեկն էլ երեխաներից մեկին ում մայրը վաճառողուհի է ասել է, թե լավ սովորիր որ մամայիդ նման վաճառող չդառնաս:»* Ուսուցչուհի, 50 տարեկան, Երևան

Կարծիքներ կային գոյություն ունեցող վերաբերմունքի որոշակի տարբերությունների մասին կախված սեռից՝ աղջիկների նկատմամբ պահանջներն

ավելի խիստ են տղաների համեմատ: Օրինակ՝ երբ ուսուցիչը զայրանում է աղջկա վրա ավելի շատ տղայի համեմատ, այն դեպքում երբ երկուսն էլ մեղավոր են:

Ազգային փոքրամասնությունների նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումները ուղղակիորեն չեն արտահայտվում, դրանք թաքնված ձևով առկա են այնպիսի հիշատակումներում ինչպիսիք են՝

*«…Եղել են բայց հայերի նման մաքուր, նորմալ հաճախել են դպրոց, նույնիսկ չի էլ զգացվել որ եզդի է:»* Մայր, 29 տարեկան, գյուղ

Մյուսներից զգալիորեն տարբերվող երեխաները նույպես կարող են անտեղի ուշադրության և նույնիսկ բացասական նկատողությունների առիթ հանդիսանալ:

*«Օրինակ մեր ընտանիքը ռուսախոս է, բայց ռուս չենք, իսկ իմ աղջկան դպրոցում ասում են, թե դու ռուս ես, Ռուսաստանում ես ծնվել: Մի քիչ այլ կերպ էր հագնվում աղջիկս, ուսուցիչը զանգում ասում էր, թե իմաղջիկը բոլորից տարբերվում է, պետք է նրան սաստել… Ու նրան դասարանում չսիրեցին: Ուսուցիչը ինձ ասում է, որ նա սպիտակ ագռավ է:»*
Մայր, 33 տարեկան, Երևան

*«Մի տղա երկար մազերուներ և շատ հետաքրքիր տղա էր: Ամբողջ դպրոցը, տնօրենից սկսած, էս երեխային նկատողություն էին անում իր երկար մազերի համար… այդ երեխան ստիպված եղավ դպրոցը փոխել:»* Մայր, 43 տարեկան, Երևան

Աշակերտների 30%-ը կարծում է, որ ուսուցիչները ցածր առաջադիմություն ունեցողներին ավելի վատ են վերաբերվում մյուսների համեմատ: Ուսուցիչները հաճախ պնդում են, որ դասարանում աշակերտների մեծ քանակի պատճառով իրենք հաճախ ի վիճակի չեն կենտրանանալ ցածր առաջադիմություն ունեցողների վրա և փոխարենը կենտրոնանում են դասարանի մի քանի լավ աշակերտների վրա: Աշակերտների կարծիքով, աղջիկները ուսուցիչների կողմից մի փոքր ավելի լավ վերաբերմունքի են արժանանում, իսկ ծնողները նշում են այնպիսի օրինակներ, երբ իրենց աղջիկներն առավել վատ վերաբերմունքի են արժանացել, քանի որ աղջիկ են և «պարտավոր» են օրինակելի վարք ցուցաբերել: Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողականության մասին որոշ վկայություններ կարելի է տեսնել այն փաստի մեջ, որ ըստ հարցման և ֆոկուս խմբերում առկա որոշ դիտարկումների արդյունքների այդ խմբերի աշակերտներն ավելի վատ վերաբերմունքի են արժանանում ընկերների կողմից:

Ուսումնասիրության այս բաժնի հետազոտական հարցն է՝ ***Դպրոցներում կա արդյոք երեխաների սոցիալ-տնտեսական վիճակի հիման վրացուցաբերվող կանխակալ վերաբերմունք:***

Չնայած քննարկված որոշ ուսուցիչների արտոնյալ վերաբերմունքի արժանացած հարուստ ընտանիքների երեխաների մի քանի օրինակների, ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ երեխաների սոցիալ-տնտեսական վիճակի հիման վրա կանխակալ վերաբերմունք գոյություն չունի: Թե՛ ուսուցիչները, և թե՛ աշակերտները հանդուրժեղական են իրենց վերաբերմունքով և լավ տեղեկացված որոշ երեխաների անխուսափելի ծանր տնտեսական պայմանների վերաբերյալ, և այսպիսով իրենք աջակից են, ուշադիր և հոգատար:

## 10.Ավագ դպրոցներ

Այս բաժինը անդրադառնում է ավագ դպրոցների՝ որպես առանձին կառույցների ստեղծման կոնկրետ խնդիրներին, քանի որ վերջինս նոր և բավական յուրահատուկ խնդիր է ՀՀ դպրոցական կրթության հասանելիության հարցում: Հարցազրույցները և ֆոկուս խմբերը բացահայտել են հարցվածների Հայաստանում ավագ դպրոցների ստեղծման վերաբերյալտարբեր մոտեցումներ: Շատերը տեսնում են ավագ դպրոցների ձևավորումը որպես դրական փոփոխություն սակայն ոչ պատշաճ կերպով իրականացված: Կան բազմաթիվ մտահոգություններ և բացասական մեկնաբանություններ ավագ դպրոցները իբրև բարեփոխում ընկալելու վերաբերյալ:

Խորացված հարցազրույցների ընթացքում հարցվածները ավագ դպրոցի ստեղծումը դրական  են գնահատել, ինչը հնարավորություն է տալիս աշակերտներին մասնագիտանալ իրենց ընտրած ոլորտում ինչպես նաև սովորել կոնկրետ առարկաները ավելի խորացված կերպով: Ավագ դպրոցների ստեղծումը նույնպես նպաստել է դպրոցների տեխնիկականհագեցվածությանը. դպրոցներին տրամադրվել են հատուկ սարքավորումներ բարձր դասարանների աշակերտների օգտագործման համար:

*«Երբ երեխան սովորում է ավագ դպրոցում արդեն իր նախընտրած ուղղությամբ, դա նրան թույլ է տալիս կենտրոնանալ իր ցանկացած առարկաների վրա, նրան հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացում կազմել իր ապագա ընտրած մասնագիտության մասին և ճիշտ կողմնորոշվելու:»* Փորձագետ

*«Առանձին գործող ավագ դպրոցների ծրագրով մենք ձեռք ենք բերել կենսաբանության և քիմիայի լաբորատորիաներ, յուրաքանչյուրը իրեն հատուկ սեղաններով, որոնք իրենց վրա կրում են պարզագույն չափիչ սարքեր. վոլտմետր, ամպերմետր և այլն:»* Դպրոցի տնօրեն, Երևան

Ավագ դպրոցների ստեղծումը համարվել է նաև բացասական զարգացում: Բացասական կարծիքներ են հնչել դասագրքերի, մեթոդաբանության, ուսումնական գործընթացի մոտեցումների,մարզերում տրանսպորտի խնդրի մասին, ինչպես նաև ընդհանուր կարծիքներ Հայաստանի՝նման փոփոխություններին պատրաստ չլինելուհանգամանքը:

Մեկ այլ ավագ դպրոցների վերաբերյալ ընթացակարգային մտահոգություն է հանդիսանում ուսուցիչների աշխատանքային ժամերի նվազումը, ինչը հանգեցնում է աշխատավարձերի նվազեցմանը: Ուսուցիչը աշխատում է տվյալ դպրոցում երկար տարիների ընթացքում, և ահա ավագ դպրոցների ստեղծման պատճառով բարձր դասարանների աշակերտները լքում են դպրոցը, և ուսուցիչները ստիպված են նվազեցնել իրենց աշխատանքային ժամերը:

*«Մեր դպրոցները համապատասխանեցված չեն ավագ դպրոց լինելուն: Ամեն ինչ արհեստական է:»* Փորձագետ

*«…նոր ուսուցչական կազմ պետք է ընտրվեր, պետք է նոր չափորոշիչներ, նոր ծրագրեր լինեն… բայց մինչ այսօր ոչ մի բանը ճիշտ ուղու վրա չէ: Ամեն ինչը մոտավորապես է:»* Փորձագետ

*«Ավագ դպրոցների ստեղծումով մենք նաև անհավասարություն ստեղծեցինք. ստացվում է, որ գյուղում սովորող երեխան, ուր չկա ավագ դպրոց չի կարող օգտվել ավագ դպրոցից:»* Փորձագետ

Ֆոկուս խմբեր են կազմակերպվել ավագ դպրոցների ուսուցիչների և ավագ դպրոցում սովորող աշակերտների ծնողների հետ: Բոլոր 10 ֆոկուս խմբերը արծարծում են ավագ դպրոցների ստեղծման վերաբերյալ խնդիրներ: Այստեղ նույնպես կարծիքները տարբերվում են, սակայն ընդհանուր առմամբ շատ են բացասականորեն անդրադարձել ավագ դպրոցների ստեղծման աշակերտների զարգացման տարբեր խնդիրներին: Ինչպես ուսուցիչները, այնպես էլ ծնողները անդրադարձել են սխալ գործողություններին և որոշակի սպասումներին, որոնք չեն արդարացվել գործող ավագ դպրոցների կրթական համակարգի կողմից:

*«Մենք սպասում էինք, որ այնտեղ ավելի լավ կրթություն կլինի, բայց հակառակը ստացվեց. ոչ դաս են անում, ոչ բան:»* Ուսուցչուհի, 50 տարեկան, Երևան

*«Ինձ համար ավագ դպրոցը կարևոր ինստիտուտ է, ուղղակի ներսում պիտի մեխանիզմներ մշակել, թե ինչպես դա աշխատի:»*Ուսուցչուհի, 37 տարեկան, Երևան

*«Ավագ դպրոցը որ ստեղծեցին, ոնց որ մեր դպրոցը գլխատեին, պետք է ծրագրերը թեթևացնեին փոխարենը ավելի ծավալուն ու բարդ դարձրեցին, շատ կան որ երեխաները չեն հասկանում, ինչքան ուզում ես օրինակ բեր, բացատրի, ինքը պետք է կարդա որ տպավորվի: Ավագ դպրոցը գտնում եմ, որ իր դերը չի կատարում:»* Ուսուցիչ, 46 տարեկան, քաղաք

*«Հսկայական տարբերություն կա ծրագրի և պահանջի միջև: Դասագրքերից դուրս են մնացել հսկայական թեմաներ, որոնք երեխան պետք է քննություն տա:»* Ուսուցչուհի, 44 տարեկան, քաղաք

Ավագ դպրոցները մասնագիտանալու և ավելի լավ գիտելիք ձեռք բերելու հնարավորություն են տալիս տվյալ ընտրված ոլորտում: Սակայն, այս համակարգի ներմուծումը Հայաստան կրում է բազմաթիվ խնդիրներ: Հեռավոր շրջանների աշակերտները ունեն դպրոց հասնելու խնդիր: Դպրոցները և ուսուցիչները բախվում են բարձր դասարանների աշակերտներին կորցնելու խնդրին, ինչը հանգեցնում է ֆինանսական խոչընդոտների: Ավագ դպրոցներում ուսուցման առանձնահատկությունները հաճախ անտեսված են, կադրերի պատշաճ վերապատրաստում տեղի չի ունենում պահանջվածի չափով, ծրագրերը չեն համապատասխանեցվել ներկայիս գործող դպրոցական ծրագրերի հետ, ինչը հանգեցնում է նրան, որ երեխաները մուտք գործելով ավագ դպրոց հաճախ չեն տիրապետում անհրաժեշտ գիտելիքների կամ, հակառակը՝ կրկնում են այն ինչն արդեն գիտեն:

## Եզրակացություն եւ առաջարկություններ

ՀՀ դպրոցական կրթության ոլորտը ենթարկվել է խոշոր բարեփոխումների, որոնք խանգարել են դպրոցական կրթության սովորական ընթացքը աշակերտների մեկ սերնդի համար: Փոխակերպման այս գործընթացը դեռ չի ավարտվել, և ընդհանուր արդյունքի վերջնական գնահատումը դեռ կերևա: Բարեփոխման այս փուլում կարելի է մատնացույց անել մի քանի նշանակալի խնդիրներ: Նախկինում կատարված հարցումները ցույց են տալիս, որ հայ բնակչության կեսը կարծում է, որ դպրոցական կրթության որակը նվազել է վերջին հինգ տարիների ընթացքում: Սույն հետազոտական ուսումնասիրությունը լույս է սփռում տարբեր խնդիրների վրա, որոնք դպրոցական կրթության հասանելիության խոչընդոտ են հանդիսանում: ՀՀ դպրոցական կրթության օրենսդրական դաշտը տալիս է կրթության ոլորտի հիմնական երաշխիքները և ձևական առումով գնահատվում է որպես բավականին զարգացած, սակայն դրա պրակտիկ իրականացումը հաճախ կաղում է պատշաճ դպրոցական կրթության գործընթաց ապահովելու հարցում: Դպրոցների քաղաքականացումը հատկապես մտահոգիչ է,մինչդեռ ստուգման և վերահսկման օրենսդրական համակարգի ամրապնդումը կբարելավվեր ներկայիս իրավիճակը:

Դպրոցները ֆինանսական պայքարի մեջ են, և որպեսզի հնարավոր լինի ապահովել այն ամենը ինչ պահանջվում է, հաճախ բեռը գցելով ծնողների ուսերին: Ներկայիս դպրոցների աշակերտի թվով ֆինանսավորման համակարգը (որոշակի փոփոխական գործակիցների առկայությամբ)փոքր դպրոցների համար հանգեցնում է ծանր խնդիրների, անտեսելով միջազգային փորձը որը քարոզում է մասնավորապես ուշադրություն և աջակցություն տրամադրել փոքր դպրոցներին, լավ կրթություն ապահովելու համար (տե՛ս օրինակ Herbert J. Walberg, 2010): Փոխարենը, գործող աշակերտների թվի հիման վրա ֆինանսական համակարգը խրախուսում է դպրոցներին պայքարել աշակերտների համար դպրոցական բյուջեն ավելացնելու նպատակով:

Չնայած բազմաթիվ դպրոցների վերանորոգման ծրագրերին և դպրոցները արդիական սարքավորումներով ապահովելու ջանքերին, տարբեր դպրոցների ֆիզիկական պայմանները խնդրահարույց են, մի քանիսը նույնիսկ գտնվում են ծայրահեղ վատ շենքային պայմաններում ջեռուցման և սանիտարական համակարգերի բացակայությամբ:

Չնայած անվանապես առկա զրեթե բոլոր դպրոցներում, համակարգիչները հաճախ գտնվում են փակված սենյակներում, կամ աշակերտները պարզապես չեն

խրարուսվում դրանք օգտագործելու համար:Լաբորատորիաներում սարքավորումների պակասը խոչընդոտ է հանդիսանում դասավանդվող առարկան պատշաճ հասկանալու գործում: Գոյություն ունի լայնատարած և ինչեղ դժգոհություն գրեթե բոլոր առարկաների դասագրքերի վերաբերյալ: Հատկապես ուշագրավ է, որ այս դժգոհությունը արտահայտվում է բոլոր հիմնական շահագրգիռ կողմերից: Աշակերտները, ծնողները և ուսուցիչները միակարծիք են, որ դասագրքերը տարօրինակ են, անօգուտ և պարունակում են սխալներ, հակասություններ և այլն:

Սույն հետազոտական ուսումնասիրության վերլուծության արդյունքում կարելի է ձևակերպել հետևյալ առաջարկությունները

i. Ստեղծելօրենքմիջնակարգ կրթության ոլորտի համար, որը բոլոր դեպքերում և ամեն գնով կառանձնացնի դպրոցական կրթության ոլորտը որևէ քաղաքական ներգրավվածությունից և հանրապետությունում տեղի ունեցող ցանկացած մակարդակի քաղաքական զարգացումներից:

ii. Իրականացնել լոբինգ լրացուցիչ ֆինանսավորում ապահովելու նպատակով, հատկապես հեռավոր շրջաններում, այնտեղ որտեղ գոյություն ունի աշակերտների մինիմալ քանակ, և ստանալ համապատասխան անհրաժեշտ մինիմումը: Այս ռազմավարությունը հանգեցնում է ուսուցիչների, ինչպես նաև ջեռուցման պակասի – մի խնդիր, որը լայնորեն նկատելի է մասնավորապես ձմռանը:

iii. Ուշադրություն դարձնել դպրոցներում մարզադահլիճների առկայությանը և դրանց պայմաններին, բոլոր բնակեցման վայրերը ներառյալ՝ մայրաքաղաք, քաղաքներ և գյուղեր: Մարզադահլիճը հանդիսանում է դպրոցում ամենացանկալի վայրը դպրոցում ժամանակը ավելի խանդավառ և լավ տրամադրությամբ անցկացնելու համար, ինչը իր հերթին կհանգեցնի աշակերտների ավելի լավ և արդյունավետ առաջադիմությանը:

iv. Քանի որ համակարգիչների օգտագործումը իրադարձություն չէ, այլ շարունակական գործընթաց, հարցումներ իրականացնել տարեկան մեկ կամ երկու անգամ՝ աշակերտների ընտրության պատահականության սկզբունքով պարզելու թե արդյոք համակարգչային սենյակները, ինչպես նաև այլ դպրոցական սենյակներ, որոնք կահավորվել են և ապահովվել

սարքավորումներով, ծառայում են իրենց նպատակին: Նման ռազմավարությունը կարող է խիստ վերահսկողական մեխանիզմ հանդիսանալ դպրոցների տնօրենների և ուսուցիչների աշխատանքի նկատմամբ, նպատակ ունենալով տրամադրել աշակերտներին մուտք դեպի դպրոցներում առկա սարքավորումներ և հատուկ սենյակներ:

v. Ավելի շատ թափանցիկություն է հարկավոր դասագրքերի ստեղծման և ընտրության գործընթացի վերաբերյալ, քանի որ եղել են պատշաճ վարքագծի խախտման և կողմնակալ դասագրքերի մրցումների որոշումների դեպքեր (ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, 2011), որոնք վտանգում են արտադրվող դասագրքերի որակը: Ցանկացած նոր դասագրքի նախնական փորձարկումը (pre-test) թույլ կտա ուսուցիչներին ծանոթանալ նոր նյութերին և կհանդիսանա իրենց կարծիքը հայտնելու հնարավորություն մինչև դասագրքի տպագրումը և դրա՝ երկրում տարածումը: Դասագրքերի բովանդակության վերանայումը ինֆորմացիայի ճշտության, հետևողականության հաստատման և ուսուցիչների կողմից հեշտ օգտագործման նպատակով կարող է օգտակար լինել մինչև դասագրքի տպագրման հանձնելը: Լավ դասագրքերի թարգմանությունը նոր դասագրքերի ստեղծման փոխարեն նույնպես դիտարկման արժանի տարբերակ է:

vi. Ուսուցիչների վերապատրաստումը պետք է կազմակերպվի ուսուցիչների կարիքների համաձայն: Ուսուցիչների կարիքները և խնդրանքները պետք է հաշվի առնվեն մինչ վերապատրաստման գործընթացի կազմակերպումը, ինչպես նաև վերապատրաստման նյութերը և օրակարգը ձևավորելու ժամանակ: Խորհուրդ է տրվում մասնակիցների կարծիքների գնահատում իրականացնել ինչպես վերապատրաստման գործընթացից անմիջապես հետո, այնպես էլ գործընթացից մի քանի ամիս անց, որպեսզի ուսուցիչները կարողանան կարծիք հայտնել նոր նյութի ուսումնական պրոցեսում պրակտիկ օգտագործման վերաբերյալ: Պետք է իրականացնել ստացված կարծիքների վերլուծություն և օգտագործել ստացված արդյունքը գալիք վերապատրաստման շարքի նպատակով:

## References


Caucasus Research Resource Centers. (2010). Caucasus Barometer [dataset]. Retrieved September 23, 2011, from http://www.crrccenters.org /caucasusbarometer/

Caucasus Research Resource Centers. (2011). Caucasus Barometer [dataset]. Retrieved October 17, 2012, from http://www.crrccenters.org /caucasusbarometer/

Caucasus Research Resource Centers - Armenia. (2011). Survey on Level of Social Cohesion in Armenian Society [dataset]. Retrieved August 20, 2012, from http://www.crrc.am/index.php/en/163

Constitution of the Republic of Armenia (1995). Retrieved from http://www.parliament.am/parliament.php?id=constitution&lang=eng

Government of the Republic of Armenia. (2008). Republic of Armenia Government Program 2008 - 2012. Retrieved from http://www.gov.am/files/docs/77.pdf

Herbert J. Walberg. (2010, March 11). Smaller Schools, Better Performance. *The Opinion Pages*. New York Times. Retrieved from http://roomfordebate.blogs.nytimes.com/2010/03/11/does-the-size-of-a-school-matter/

